

ՏԱՋԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄՐ

Երկրորդ տպարանը Երևանի քաղաքում է...

ԶԱՐԲԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷԶԻՐԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

I ԱՊՐԷԼ 1910

ԹԻԻ 9

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ. Եկեղեցւոյ ժողովրդականութիւնը

ԿՐՕՆԱԿԱՆ. — Լացի գիշերը

ԲԱՐԻ ԸԼԼՍԼՈՒ ՄԻՋՈՅԸ. — Ինչո՞ւ պէ՛տ է հա-
ղորդուիմք

Հայ Եկեղեցւոյ Ս. Հայրերը

Տօն քառասուն մանկանց

Տէր Ամենակալ (Աւխարհաբար, լանգաւոր)

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՔԱՐՈՋՆԵՐ. — Կարժի դաստի-
րակութիւնը

Պատմութիւն Հայ Զայնագրութեան

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ. — Ափրիկէի Քրիստոնեաները.

— Անկիլիան Եկեղեցի. — Ռուս Եկեղեցի

Խորհուրդներու անուրջփին մէջ (Քերթուած)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆԻԸ

Ս. Սահակ Պարթեւ կամ Արշակունեաց քաղաւորու-
թեան քարձուրը

ԲԱՐԳԷՆ ՎԱՐԴԱՆ

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ

Ս. ՔՈՒՊԷ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

ՅԱԿՈԲ Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

ԶԱՐԲԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՔԶ. ՀԻՍԱՐԼԵԱՆ

ԱՐՏԱԽԱՋԻ ՎԱՐԴԱՊԵՏ

ԳԱՐԵԳԻՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Գին 50 փարայ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

Զագմագճըլաթ, Յակոբեան խան, Կ. Պոլիս

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՂԻՆԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջին. Տեղապահ
Տ. Մատթէոս Վրդպ. Ինճէեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջին. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդպ. Դաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեգին Բնյ. Պողարեան
ԱՐՄԱՇ. — Փոխ-Վանահայր Տ. Մեսրոպ Մ.
Վրդպ. Նարոյեան
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարգէն Մ.
Վրդպ. Կիւլէսէրեան
ԳՕՆԻԱ. — Տ. Յովհ. Բնյ. Գուլումեան
ԵԳԻՊՏՈՍ. — Առաջնորդ Տ. Մկրտիչ Մ.
Վրդպ. Աղանուհի
ԵԴԵՍԻԱ. — Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վ.
Դիմաքեան
ԵՐԶՆԿԱ. — Առաջնորդ Տ. Երուանդ Վ.
Փէրտանճեան
ԵԻԴՈԿԻԱ. — Առաջին. Տեղապահ Տ. Ար-
տաւազդ Վրդպ. Գալէնտէրեան
ԶՄԻԹԻՆԻԱ. — Առաջին. Փոխանորդ Տ.
Յովհաննէս Ա. Բնյ. Մինասեան
ԷՍԿԻՇԷՆԻՐ. — Տ. Գալուստ Բնյ. Տ. Գա-
լուստեան
ԽԱՐԲԵՐԴ. — Առաջին. Տեղապահ Տ. Գէ-
որգ Մ. Վրդպ. Աղանուհի
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Մ. Վ.
Սաատէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թոքատեան
ԿԻԻՄԻԻԼԻՆԷ. — Տ. Ներսէս Բն. Նշոնեան
ՀԱԼԷՊ. — Առաջին. Տեղապահ Տ. Շահէ Վ.
Դաւաղարեան
ՄԱՆԶԷՍԹԱՆ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ս.
Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՄԱՐՍԻԼԻԱ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Եղիշ
Բնյ. Գալլինեան
ՄՈՍԿՈՒԱ. — Տ. Պապենեան Բնյ.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան
ՆԻԻ-ԵՕՐԲ. — Տօքթ. Թիւրաքեան Խան
ՆՈՐ ԶՈՒՂԱ. — Առաջին. Փոխանորդ Տ.
Բազարատ Վրդ. Վարդապետեան
Շ. ԳԱՐԱՀԻՍՍԱՐ. — Տ. Նաթան Բն. Տատ-
եան
ՈՒՇԱՐ. — Կարապետ էֆ. Քեհնեան
ՊԱՆՏՐՄԱ. — ՊԱԼԲԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Մ. Վրդ. Մալլըմեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպիսկ. Կէօմիւքեան
ՊԱՅՐԱ. — Կարապետ էֆ. Քէրթմէնեան,
տնօրէն ազգ. վարժարանաց
ՊԱՐՏԻԶԱԿ. — Յովհաննէս էֆ. Տ. Կարա-
պետեան

ՊԵՅՐՈՒԹ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Եղի-
կիէլ Վրդպ.
ՊՈՒՔՐԷՇ. — Դաւաղարտ էֆ. Կոնիկեան
ՊՐՈՒՍՍ. — Առաջնորդ Տ. Յովհաննէս Ա.
Եպիսկ. Սրչարուհի
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բնյ. Մըր-
նիկեան
ՌՕՏՈՍԹՕ. — Առաջին. Փոխանորդ Տ. Բար-
թոյ Բնյ. Թաքմեան
ՍԱՄՍՕՆ. — Առաջին. Տ. Սահակ Մ. Վրդ.
Օտապալեան
ՍԵՖՍԱՍԻԱ. — Առաջին. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բն. Օտապալեան
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Սիրովրէ
Բն. Ներչակուն
ՍՕՅԻԱ. — Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպ-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմիսիոս Բնյ. Տրէզ-
եան
ՏԷՏԷ ԱՂԱՃ. — Գարեգին Բնյ. Տէօլ-
էթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէսեան
ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Զէորգ Բն. Թէրզեան
ՏՓՂԻՍ. — Հ. Առաքելեան
ՎԱՌԷԱ. — Աւետիս էֆ. Զարպանէլեան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառմա-
պուն Բնյ. Քիպարեան
ՔԵՕՍԹԷՆՃԷ. — Տ. Մատթէոս Բնյ. Մա-
նիկեան
ՔՂԻ. — Առաջին. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
ՅԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՅՐԷԶՆՕ. — Ազն. Յանկոր էֆ. Նշկեան
«ՏԱՃԱՐ»-ը կը վաճառուի բոլոր լրա-
գրավաճառներու կողմէ: Վաճառման կեդ-
րոնատեղին է Պոլիս, Պազըրճըլար՝ Արմե-
նակ Եւրոքեան և Ընկ. «Սիւնեաց» Գրա-
տուն. Բերա, Սըլանախի դէմ, ծխալս-
ճառ Գառնիկ էֆ. Կիւլէրեանի և ուրիշ
ծխալաճառներու բով:

ԱԶԱՏՈՐԴԻ, ՍՏՐԿՈՐԴԻ, ՀԱՅՈՐԴԻ,

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հոգեւորական պատկեր մը Հայ Ժողովուրդի
իրական կեանքէն

Դրեց

ԳԱՐԵԳԻՆ Վ. ԽԱՅԱՏՈՒՐԵԱՆ

Կեդրոնատեղի վաճառման

Ս Ի Ի Ն Ե Ա Յ Գ Ր Ա Տ Ո Ւ Ն

Կը գտնուի նաև Պապիկեան, Գլըճեան
և Պոլեմոս գրավաճառներու և Պայպլ Հա-
ուզ Դրիգոր էֆ. Շահապետեանի մօտ: Գին
2 դահեկան:



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

1 ԱՊՐԻԼ 1910

ԹԻԻ 9

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

Շատ կը խօսուի Հայ Եկեղեցւոյ Ժողովրդականութեան վրայ՝ մա՛նաւանդ այն ատեն, երբ անոր նոյն իսկ Հայ հակառակորդները (?) բաներ մը ունենան ըսելու իրենց ազգային ամէնէն պատմական, ամէնէն պատուական և ամէնէն տեւական հաստատութեան դէմ: Տարակոյս չկայ որ հանրային, ազգային հանգամանք ունեցող ամէն հաստատութիւն իր գոյութեան պատմական և իրական պատճառները ունի: Այդ պատճառները ընկերական կեանքի պէտքերէն ծագում կ'առնեն և չեն կրնար բռնի միջոցներով վերցուիլ մէջտեղէն: Ատոնք կը մնան՝ ցորչափ կը մնայ ընկերական կեանքը, որ ատենց ծագման բուն պատճառն է: Ընկերական կեանքն իր յառաջդիմութիւններուն կամ յետադիմութիւններուն բոլոր հետքերը խորապէս կը թողու իրմէ

բղխած հաստատութեան պատմութեան վրայ: Ասիկայ անյեղի օրէնք մըն է ընկերաբանօրէն: Հայ Եկեղեցին, Հայու ազգային կամ ընկերական կեանքէն ճառագայթող հաստատութիւն մըն է: Եւ այդ հաստատութեան բոլոր կեանքը, բոլոր տառապանքները, բոլոր խրախճանքները, իրենց ամէնէն նուրբ մանրամասնութիւններով, միեւնոյն են հայ ազգի ընկերական բովանդակ կեանքին հետ: Արդ՝ երբ կ'ըսուի՝ մա՛նաւանդ երբ կը շեշտուի թէ Հայ Եկեղեցին Ժողովրդական Եկեղեցի մըն է, այսպիսի ըստաճք մը ձրի ապացոյց մը չէ ո և է ջատագովի մը նրբամտութենէն ընձեռուած. ո՛չ. ասիկայ նոյն իսկ նշկարագիրն է, քառափթեռն է Հայու ընկերական կեանքին, որ ինչպէս իր հոգեւոր հաստատութիւնը, նոյնպէս իր աշխարհական իշխանութիւնը Ժողովրդական սկզբունքներով վարած է: Հայ Եկեղեցին Ժողովրդական է ըսել, ուրեմն, ո՛չ միայն ըստ ինքեան իրականութիւն մըն է Հայու ընկերաբանական կազմութեան տեսակէտով, այլ նաեւ եզր մը համեմատական պատ-

մութեան համար. եզր մը, որ կը բա-
րացուցէ Հայ Եկեղեցին, զոր օրինակ
Լատին եկեղեցւոյ քով՝ բոլորովին
ցայտեցնելով իր յայտնի, որոշիչ գի-
ծերը: Ինչպէս քրիստոնէական ամէն
Եկեղեցի, նոյնպէս լատինականը աւե-
տարանական միւսնոյն էական սկզբ-
բունքներու վրայ կազմակերպուած Ե-
կեղեցի մըն է. բայց ինչպէս ամէն
ազգ, ամէն ցեղ կամ ժողովուրդ իր
ընկերաբանական կեանքը կը խտացնէ
իր հանրային կամ ազգային հաստա-
տութիւններուն մէջ, նոյնպէս լատին
ցեղը խտացուցած է իր Եկեղեցւոյ
կառավարութեան մէջ՝ իր տիրապե-
տողի միահեծան ոգին, և հետզհետէ
իր պէտքերուն և փորձառութիւննե-
րուն հետեւանքով՝ մտածած և հնա-
րած է այն բոլոր խորագէտ և վար-
պետ միջոցները, որոնք պիտի ուժա-
ւորէին եկեղեցական միահեծանու-
թիւնը թէ՛ ինքն իր մէջը և թէ՛ ու-
րիշ եկեղեցիներու վերաբերութեամբ:
Լատին Եկեղեցւոյ այս նկարագիրը
չառ որոշ կերպով կը շեշտուի եկե-
ղեցական պատմութեան մէջ: Նկատի
առէք միայն Հռովմայ Քահանայապե-
տի ներկայացուցիչներուն բռնած ըն-
թացքն ու դիրքը եկեղեցական ժո-
ղովներու մէջ. միշտ առաջին բարձ,
միշտ վերջին խօսք, վճիռ՝ լատին Ե-
կեղեցւոյն պէտք է ըլլայ: Լատին Ե-
կեղեցին ինքն իր մէջ, շատ բնական
է ասիկայ, աւելի զօրեղ միահեծա-
նութիւն մը պիտի հեղինակէր, այն-
քան զօրեղ, որ զայն բոլորովին ան-
ժողովրդական ընելու համար եկեղե-
ցականներու ամուսնութիւնն ալ ջըն-
ջեց պաշտօնապէս, և յաջողեցաւ միա-
ձոյլ, կոյր եկեղեցական-զինուորութիւն

մը մարմնաւորել, որ պատրաստ է
ամէն հրամանի, ամէն կողմ և ամէն
միջոցներով, ո՛րչափ ալ սատրին ըլ-
լան միջոցները, քանի որ նպատակը
կ'արդարացնէ միջոցները: Գերազան-
ցապէս լա՛ւ կազմակերպուած կղերա-
վարական Եկեղեցի մըն է ուրեմն
լատինականը, իսկ հայկականը գերա-
զանցապէս ժողովրդավարական:

Բ.

Պատմական և ընկերաբանական
այս ճշմարտութիւններն ամփոփելէ
ետքը, կը փափաքիմ ընթերցողնե-
րուս ուշադրութիւնը հրաւիրել երե-
ւոյթի մը վրայ, Հայ Եկեղեցւոյ ժո-
ղովրդական նկարագրին շուրջ, որ
չեմ գիտեր ինչո՞ւ չգրաւեր Հայ Ե-
կեղեցւոյ հետ զբաղողներուն ուշը:

Յայտնի է որ Հայ Եկեղեցւոյ
մէջ դաւանաբանական և կանոնադի-
տական իւր, որոշումներ ազգային-ե-
կեղեցական ժողովներու միջոցաւ տըր-
ուած են, և աշխարհականներ ալ մաս-
նակցած են այդպիսի ժողովներու:
Ամէնէն հետաքրքրականներէն, իբր
օրինակ, 448ին Շահապիվանի մէջ
գումարուած ժողովը կրնամ մատնա-
նիշ ընել: Ժողովրդավարական Եկե-
ղեցւոյ մը պատմութեան մէջ՝ սակայն՝
չառ աւելի հետաքրքրական է այն ե-
րեւոյթն, որ Եկեղեցիներու մատա-
կարարութեան առհասարակ աշխար-
հականացումով ուշ կը գրաւէ: Առաջ-
ները եկեղեցական հասոյթներն եպիս-
կոպոսներու և աւագերէցներու ձեռ-
քով կը մատակարարուէին. հիմայ,
Թուրքիոյ Հայերը շատ լաւ գիտեն,
թէ ինչպէս կը մատակարարուին ի-
րենց եկեղեցիները:

Ազգ. Սահմանադրութեան հաստատութենէն առաջ ամիրաները Կ. Պոլսի մէջ և «խխան»ները գաւառներու մէջ ախրապետած էին եկեղեցւոյ ինչքերուն, կալուածներուն և հասոյթներուն մատակարարութեան վրայ: Ազգ. Սահմանադրութիւնն աւելի որոշ ձեւ մը տուաւ եկեղեցիներու մատակարարութեան ինդըին, և բոլորովին աշխարհականացուց զայն: Եւ այսօր, եթէ մէկդի տունէք քանի մը վանքեր, Կ. Պոլսի Մայր եկեղեցիէն սկսեալ, գաւառներու մէջ ամէնէն յետին եկեղեցիներու մատակարարութիւնն աշխարհականաց ձեռքն է: Պատրիարք, առաջնորդ, աւագերէց կամ քահանայ ուղղակի գործօն դեր մը չունին մատակարարութեան մէջ: Եկեղեցիներու դրամներուն ուղղակի աշխարհականներու ձեռքով մատակարարումը՝ իր լաւ և յոռի կողմերն ունեցած է. մինչ պէտք էր որ ամէն մասամբ լաւ արդիւնք տար մատակարարութեան այդ նոր ձեւը, որովհետեւ իրապէս լաւ արդիւնքի մը յոյսերով օրինադրուած էր: Յոռի կողմերէն կը մասնանշեմ եկեղեցականաց և մասնաւորապէս քահանայական դասին անկումը: Շատեր կը կարծեն որ հայ քահանայութեան անկումն հետեւանք է միայն և միայն անուսումնութեան: Զայն չեմ ուրանար, բայց միակ պատճառն այդ չէ: Քահանայից ապրուստի խնդիրը, մասնաւորապէս այդ ապրուստը ձեռք բերելու միջոցները, ըստ ինքեան այնչափ ստորնացած և անբարոյացուցիչ հանգամանք մը առած են, որ հայ քահանայութեան անկումն մէջ կարեւոր տեղ կը բռնեն: Ես տնձնապէս հա-

մամիտ եմ եկեղեցւոյ դրամներուն աշխարհական ձեռքերով մատակարարութեան, և համոզումն ալ սա է, որ եթէ մեր Ազգ. Սահմանադրութիւնը կատարելագործուի և գործադրուի անթերի, իրապէս բարիք մը կը գառնայ մեր ազգային առողջ նշանակութիւնը պահելու համար. բայց երբեք համամիտ չեմ որ եկեղեցին իբր խանութ շահագործուի, և իր հասոյթներէն իր բարեկարգութեան և զարգացման համար լումայ մը չյատկացուի:

Ես երկար ատեն բռնադատուած էի Պոլսի մնալ և Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Քարոզչութիւնն ընել: Ս. Լուսաւորիչ Կ. Պոլսոյ ամենէն հին և ուղղակի Հայոց համար շինուած հնաճաշակ և հնարժէք եկեղեցին է, Պոլսի Փաթիհի ձեռքով գործուածն շատ առաջ: Այս եկեղեցին միանգամայն Պոլսի ամէնէն հարուստ երկու եկեղեցիներէն մէկն է, որ եթէ չեմ սխալիր՝ ամսական 120 ոսկիի չափ — եթէ ոչ աւելի — եկամուտ ունի: Արդ՝ ամսական այս 120 ոսկիէն, իրապէս եկեղեցւոյ բարեկարգութեան և զարգացման համար նշանակելի բան մը չծախսուիր: Կարծեմ ամսէ ամիս 30 ոսկիի չափ նիւթական ծախք մը ունի՝ պաշտօնեաներու և այլ սպառելի պէտքերու համար: Մնացածը Ս. Լուսաւորիչի կշտին բարձրացող կեդր. վարժարանին կը ծախսուի: Իմ քարոզչութեան միջոցին, տարեկան 1750 ոսկիի չափ ծախք ունէր կեդր. վարժարանը. այս դուրմարին 250ը հազիւ կը գոյանար դպրոցական թոշակներէն. մնացածը մեր պապաւ Լուսաւորիչը կը հայ-

Թայթեր՝ լուսաւորութեան այդ կեդ-
րոնին համար: Մինչ կարելի էր թէ՛
օգնել կեդր. վարժարանի պէս մեր
ամէնէն կարեւոր կրթական Հաստա-
տութեան, և թէ՛ աշխատել Ս.
Լուսաւորչի պայծառ բարեկարգու-
թեան, իր իսկ դրամով պատրաստել
տալով իր պաշտօնեաները: Ես խո-
րունկ ցաւով կը լսէի այն ատեն պաշ-
տօնեաներուն տրտունջը՝ ապրուստի
անբաւականութեան մասին. բայց բան
չէի կրնար ընել՝ քանի որ Մշոյ պէս
200 եկեղեցիներով վիճակի մը առաջ-
նորդութիւնը քիչ մը առաջ ինձ վրա-
տահուած ատեն, ասդին Պոլսի 40է
աւելի եկեղեցիներէ մէկուն մէջ՝ բնմի
վրայ ձայն ունէի միայն. և ա՛յո էր
և է՛ վիճակը թէ՛ Պատրիարքին և
և թէ՛ բոլոր քարոզիչներուն Պոլսի
մէջ, եթէ ըլլան նոյն իսկ եպիսկոպոս
կամ արքեպիսկոպոս:

Իրողութիւններուն և հաշիւներուն
այս պերճախօսութիւնն այնքան նշա-
նակալից է, որ աւելորդ է խորհրդ-
դածութիւններ լծորդել ատոնց՝ ցոյց
տալու համար թէ ո՛րչափ ժողովրդա-
վարական է Հոյ եկեղեցին:

Այս առթիւ կը փութամ երե-
ւոյթ մըն ալ մատնանիշ ընել:—Շատ
կը խօսուի նաեւ եկեղեցականաց զեղ-
ծումներու մասին՝ եկեղեցւոյ հարըս-
տութեան մատակարարութեան մէջ:
Զեղծում, ուր որ ալ ըլլայ, պախա-
րակելի է: Ազգային հաշիւներու մէջ
մասնաւոր, անհանդուրժելի է զեղ-
ծումը: Եւ ես խորունկ ատելութիւն
մը ունիմ այն զեղծումներուն դէմ,
որոնք կը գործուին Աստուծոյ սեղա-
նին շուրջը, տաճարներու մէջ և ազ-
գային սնտուկներու վրայ: Սեղանա-

կապուա եկեղեցականներու, դիտու-
թեամբ և անդիտութեամբ զեղծա-
նողներու հետքերն անջնջելի են մեր
եկեղեցիներու և վանքերու կեանքին
մէջ: Ահա՛ հատ մը, սա մեր Անկիւ-
րիոյ Կարմիր-Վանքը, որ սեղանակապ-
տութեան գէշ կերպով նշաւակ եղած
է դոնէ Մկրտիչ արքեպիսկոպոսէն ի
վեր (եաքը կիլիկիոյ կաթողիկոս եղած):
Բայց Մկրտիչ արքեպոս. մինակ չէ.
աշխարհական մրցակիցներ ալ ունի:
Պատմութեան անշուքներն ապշութիւն կը պատ-
ճառեն և ցաւազին տպաւորութիւն-
ներու տակ կը գալարեն էութիւնդ:
Բայց ի՞նչ հարկ բերանացի պատմած-
ներու: Կարմիր-Վանքին արդի տկու-
ղութիւնը, պատուական մատենադա-
րանի մը նշխարներն ամէն բան կը
պատմեն. մատենադարան մը, որ ո՛չ
միայն թանկագին հատորներէ զըր-
կուած է, այլ նաեւ իր մնացած ձե-
ռագիրներուն մէջ զմելի և արմատէն
գօտանալիք ձեռքեր անխելք, սոգէտ
արշաւանքներ ըրած են. ասդին թուղ-
թեր ամբողջ խլուած, անդին պատ-
կերներ հանուած, հո՛ս խորաններ,
գլխագիրներ, լուսանցազարդեր փոր-
ուած՝ պարապ ակնակապիճներու
պէս, հո՛ն յիշատակարաններ փըր-
ցուած: Հապա զգեաւորներն և ակա-
նակապ ու մարդստաշատ հիւսուածք-
ներն ու բանուածքները. ամէնքն ալ
սրբապղծուած, թանկագին քարերու
տեղ սուտերն ագուցուած, կամ գե-
րեզմանի պէս կողոպտուած, պար-
պուած: Արծաթ կանթեղներ ու այլ
անօթներ, ամէնէն ալ զարդ մը, վեր-
ջաւորութիւն մը, բան մը խլուած, ա-
մէնքն ալ խեղ ու հաշմանդամ: Հին
առաջնորդներուն հրաշալի և հաւու-

տարիմ գործունեութիւնը, արդիւնաւորութիւնը, նորերուն սեղանակապտութիւնը, քողարկուած գործակից և շահախնդիր աշխարհականներու մրցակցութեամբ, աւրած, աւրըշտըկած են Կարմիր-Վանքը, որ ոգեսպառ ինկած է ճամբու վրայ երիքովի վիրաւորին պէս:

Այս կարճ նկարագրութեան քով պէտք է դնեմ ուրիշներ ալ: Դեռ նոր վերադարձած եմ թեմական այցելութիւններէ, և ո՛ւր որ գացի, բաւական մնացի, քննեցի, քիչ շատ բաներ մը տեսայ, որ Հայ եկեղեցւոյ ժողովրդականութիւնը՝ զեղծագործութեան վերածումը երեւան բերին, և ասոնք՝ ուղղակի աշխարհականներու ձեռքով: Այս երեւոյթը, Սամսոնի մէջ, առաջին առաջնորդութեանս ատեն ալ տեսած էի. բայց մտքէս չէի անցններ որ այնքան տարածուած ակտմը եղած ըլլար այդ՝ հայ եկեղեցիներու դրամը մաստկարարող իշխանազաններու մէջ: Կը քննես հաշուետետրականները — Աստուած տետրակ ընէ —, կը պրպտես հին մուրհակները, կը լսես չարձանագրուած տեղեկութիւնները, և կը նայիս եկեղեցիներու նիւթական և բարոյական խեղճութեան, և կը տեսնես . . . զեղծում, զեղծում, մինչեւ վերջը զեղծում: Իշխան-աղային մէկը եկեղեցւոյ դրամներն առեր և գործածեր է իր ուզածին պէս. իր մարդերուն, կամ իրեն «աղա՛, դուն գիտես» ըսողներուն աղայութիւն ըրած է եկեղեցւոյ սնտուկէն և չէ վերադարձուցած. կամ իր մարդիկը գործի գլուխ անցուցեր է, զոր օրինակ եկեղեցական ըրեր է, և թող սուեր է որ ապրին: Հապա

սա՛ ղէնէ՛ճներու արցակներն և սոպակներն, ի՛նչչափ պերճախօս են: Ամէնքն ալ չվճարուելու համար շինուած մուրհակներ. պայմանաժամը լըրացեր, քանիպատիկը անցեր, խոտացուած սողոսներու ծանրութեան տակ դեղնած, քճքճուած, թուղթի կտորներ: Եթէ բախաւարութիւն մը կայ՝ այն ալ սա է որ շատեր մեռեր են. և լա՛ւ է որ մեռեր են պարտաւորները, որովհետեւ եթէ ողջ ըլլային՝ դարձեալ պիտի չվճարէին իրենց պարտքերը. «ազգին դրամը՝ ազգին» պիտի ըսէին: Եկեղեցւոյ սնտուկին չուրջ ա՛յնպիսի դարձումներու, շուկացիի ա՛յնպիսի ձեռնածութիւններու հանդիպեցայ, որոնք կը բացատրեն հայ ազգին ներքին փտութիւններուն ու փլուզումներուն պատճառները: Հո՛ս ինծի ցաւ պատճառողը ո՛չ այնչափ դրամի կորուստն ու փճացումն է, ո՛րչափ ազգին դրամն այդպէս գործածելու համարձակութիւն տուող բարոյական պատճառը, հասկցողութիւնը: Եւ այս վերջին զեղծումները, հեռաւոր անկիւններու մէջ, առանց եկեղեցական մատի, մշակուած և կատարելագործուած են. որովհետեւ այդ տեղերը արդէն եկեղեցական չկայ. շատ անգամ մէկ քահանայ միայն կայ, այն ալ ժամանակաւոր պաշտօնով կամ հազիւ ինքն իրեն բաւող:

Հայ եկեղեցւոյ ժողովրդավարութիւնը մինչեւ այս աստիճաններն իջած է. և պէտք է մեծ ուշադրութեամբ քննել և ուսումնասիրել այս երեւոյթը, որ ինչպէս վերագոյն ըսի, զարմանալի կերպով ուշադրութիւն չգրաւեր: Բայց կ'արժէր որ այս երեւոյթին վրայ ուշ դարձնէին հաւա-

տարապէս թէ՛ անոնք որ Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան կողմն են, և թէ՛ անոնք՝ որոնք տարօրինակ ըմբռնումով մը հակառակորդ են իրենց ազգային ամէնէն իրական և պատմական հաստատութեան և անոր պաշտօնէութեան :

Զեղծումները պէտք է գտնել, ի վեր հանել դերագոյն անաչառութեամբ Հայ Եկեղեցւոյ ժողովրդավարական մատակարարութեան մէջ՝ փրկելու համար հաստատութիւնը, որուն գոյութիւնն Հայ ազգին գոյութիւնն է, որու պատմութիւնն Հայուն պատմութիւնն է, որ միայն կղերին չէ, որ միայն աշխարհականին չէ, այլ Հայուն է ամէն դարու մէջ և ամէն տեղ, որ Հայութեան կը վերաբերի, և այս՝ այնչափ պատմական յայտնի իրողութիւն մըն է, զոր օրինակ, Շահապիվանի ժողովէն անդին և ասդին, որչափ հիմայ Հայ Եկեղեցւոյ արդի լայն ժողովրդավարութեան զեղծումներուն մէջ :

Կռուեցէ՛ք ամէն կարգի և տեսակի զեղծումներուն, անկանոնութիւններուն դէմ, վերջ տուէ՛ք ատոնց, և պիտի տեսնէք որ դարաւոր նահատակութիւններով Հայու ոգին արձա՜նացնող այս Եկեղեցին՝ ամէնուն պիտի ժպտի իր գրաւիչ շնորհներով, իր պատմական փորձառութիւններու փայլով, իր կրօնական բարձր նշանակութիւնով, իր ազգային գեղեցկութեամբ, իր ժողովրդական նկարագրով, իր բոլոր փառքով ու պարծանքով, որոնք կը ճառագայթեն իր մեծ գոյութենէն, Այրարատէն մինչեւ Տաւրոն, Տարօնէն մինչեւ Կիլիկիա, և ամէն տեղ ուր որ կայ Հայ Եկեղեցի

մը, հայ մատուռ մը, նոյն իսկ լուսաշող Եւրոպա ու Ամերիկա :

1910 Մարտ 12

ԲԱՐԻԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Անկիւրխս

(Կարմիր-Վանք)

ԿՐՕՆԱԿԱՆ

ԼԱՅԻ ԳԻՇԵՐԸ

«ԵՒ ԷՐ ԳԻՇԵՐ» : Յովն. ԺԳ. 30

Անշուշտ գիշեր պիտի ըլլար, վառնդի լոյսին՝ մատնութեան այդ ահուլի չարութիւնը չէր կրնար գործուիլ. չարերը միջառններուն պէս մութին մէջ երեւան կ'ելնէին և իրենց աւերիչ գործը կը տեսնէին. սեւ սեւ մտածումներ օձերու նման իրարու կը գալարէին, և մեծ ոճիրը տեղի կուենայ :

«Եւ էր գիշեր...» Երկու բառեր, որոնք ողբերգական իրողութիւնն համակ կը պատկերեն, բառե՛ր, որոնք ամբողջ Խորհուրդ մը, պատմութիւն մը կը բովանդակեն, թէեւ այդ պատմութեան էջերը միբոլորում ըլլան մարդուն ապերախութեամբ. ինչ չմտնում աչքերու, ինչ կուրութիւն մտքի, անմեղ մահապարտին տեղ կը դատապարտեն, հրեշտակի ոտանիքն հեռ կը չփոթեն, Յիսուսի կ'ըսեն. «Կը հայհոյես», մինչդեռ իրենք են հայհոյողները. չար կ'անուանեն զԱնի, մինչդեռ իրենք են չարերը :

Ապշա՛ծ մտքեր, կրնա՞յ հայհոյել նա որ Սրբութիւնն ատուածացուց, կրնա՞յ չար ըլլալ Ան՝ որ սիրեց գերազանցապէս մարդկութիւնը, որուն փրկութիւնն էր իր կէտ նպատակին, Անոր համար այս չարչարանքն ու անարգանքը, այս ծաղր ու ծանալանքը :

Այն գիշեր Գեթսեմանիին ծառերը ճեղքեցան, ծաղիկները գունատեցան, ժայռերը պատուեցան այս ոճիրին հանպէս, բայց մարդն անտարբեր մնաց : Իր ըրածը

սխալ էր թէ դիտում, ո՞վ գիտէ. միայն սա գիտենք թէ աստղերը չհանդուրժեցին ու այն օրէն այսօր արցունք կը ցօղեն։ Զիթենեաց լերան կողերն ինչէ՞ր տեսն ու ի՞նչ տաքնապներ անցուցին, ու կ'ըսեն թէ քարերը մինչեւ հիմայ դեղին են հոն։

«Եւ էր գիշեր»։ Այս շանթահարիչ խօսքը ստեղծում կուտայ մեղի, երբ տաքնատեսիլ Գողգոթան կերպարանուի մեր աչքերուն. լերի դազաթ մը՝ կենդանի՝ միայն լքուածութեան սիւսերոյերով, թունաւոր մողէղներով և կարծններով, և իրիկնադէմի մահաշունչ քամիին չշուկովը, այնքան չարագուշակ, Բարձունքներն ի՞նչ յանցանք ունին, երբ մարդուն պակուցիչ սգիտութիւնն է որ կ'ողորտէ անոնց վեհութիւնը։ Վայրերը տխուր հաչակուեցան մարդուն սխալով։ Մարդն է դատապարտելին, մարդը բարոյականի գահավէժ անկումով մը անդունդին մէջ կը սողոսկէր, Արգարութեան Արեգակը լոյս տուաւ մինչեւ այդ գէճ խորերը, մարդու ցոյց տալու համար իր գիրքին տաւորութիւնը. բայց ան իր աչքերը գոցեց. սխալեցաւ, մինչեւ ցարդ կը սխալի, վասն զի խաւարի է գերի։

Քրիստոս ոգեց. «Ես լոյս աշխարհ եկի»։ Փարիսեցիները, դպիրներն ու քահանաները, խաւարի այդ կարծես ուխտաւ պաշտօնականներ կատեղեցան և ուզեցին լոյսը խափանել, թաղել. միթէ կարելի՞ քան էր, խաւարը լոյսին ազդեցութիւնն աւելի կը չեչտէ. ամենէն ռամիկն իսկ գիտէ թէ ստուերը լուսանկարին փայլը կ'աւելցնէ. այսպէս Լոյս էր Յիսուս. ահա թէ ինչո՞ւ չարերուն սարսափը, կեղծաւորներուն արհաւիրքը, անիրաւներուն սարսուռը։

Ու Յիսուս անոյշ կը ձայնէ աշակերտներուն. «Մի խաւար ձեզ հասցէ, զի որ գնայ ի խաւարի, ո՛չ գիտէ յո՛ երթայ»։ Ան որ մթութեան մէջ կը խորխորի, ան պատճառ կը մալորի. ինչ դժբախտ է մարդս, երբ կանխաւ չտեսներ թէ իր գործերն ի՞նչ վախճանի կը յանգին։ Գիշերը իր անդոճական ցնորքներու վրդովն ունի. գիշերը կ'իշխէ չարութիւններով խաղաշուքած հոգիներու վրայ, բայց գիշերը մեզ

չահարեկեր, քանի՜ սեր մեր հողին չէ՛ պատեր, քանի լոյսը կը վնասենք ու լոյսին կը փարինք։ «Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէք ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք»։

Եւ սակայն արդեօք այսօր ալ չկա՞ն այն աեսակ մարդեր՝ որ Յիսուսի չարչարողներն արհամարհած տաննին իսկ՝ այդ անարդութեան մուրը կը կրեն իրենց ճակտին վրայ։ Քանի՞նք Բարսաբա չարագործ մարդասպանին տեղ Մեծ-Անունը դատապարտելը քահանայապետներուն երեսին տուած ատեն, անմեղներու արիւնը քումած են. քանի՞նք արդեօք խաչողներուն գէճ տկուայ կրճատած միջոցին իրենք ևս կռիւնքի գործերով Քրիստոսը կը խաչեն՝ եղբայրը տանջելով։ Մթութեամբ սքողուած տաճարին մէջ շատեր հաւաքուեր են. ու մանք կը մրափեն, ոմանք կը յօրանջին, ուրիշներ ալ անամօթաբար կը կատակին. անոնք զգածուիլ, յուզուիլ, հոգիանալ չեն դիտեր. անոնք է՛ն սուրբ զգացումները տիղմին մէջ կը խօթեն. անոնց համար այս գիշերուան վեհութիւնն իմաստ չունի, անոնց համար բարձրանալ չկայ. Աստուածորդին է իջեր, զանոնք՝ ինկած հրեշտակներ՝ նախկին կատարելութեան տանելու համար. Փրկիչն եղբայրներու ազատագրութեան համար ինչին վրայ կը զոհուի. ո՞ւր է հիացքը, ո՞ւր է սարսուռը։ Երբեմն մահաշոտ Գողգոթային ստորեւ ապերախտ խուժանը կը վժար պիծակներու հանգոյն. ո՛ւհ, այդ եղերասարին չուրջ երբեմն ուրուականներ, զերեզմանաց աշխարհի պատիմներ, չար ոգիներ, մարդ-վիշապներ դերակատարներն եղան այդ տիեզերական ստամին. այսօր ի՞նչ կը տեսնենք. այսօր ալ նոյն անիծեալ մարդ-կութեան խլեակներ, անոնք որոնց հոգին պացք չունի, անոնք որոնք խաւարի գուպարներուն խառնուած են, անոնք ուրոնց անգունքը զոհի ճենճերներով պարտուած են. այսօր ալ կուրցած մաքիւր, քորացած սիրտեր...։

Ինչո՞ւ սակայն Հոյսատանեայ Եկեղեցին գողգոթուն քնար է կտրեր ինչին հանդէպ. փրկութեան սա ծառէն կախուած

այդ քնարն համակ թրթռացում, ողբ, լաց, յոյզ է: Կարելի է չզգածուիլ երբ Յիսուս ցոյց կուտայ դիւցազնութիւն մը, որ տատաւածային է. ու այդ գերազանց դիւցազնութեան մէջէն դարձեալ ազիք պատուղ ցաւ կ'ժայթքէ չարերուն ճակտին. ա՛յնքան կը սիրէ մարդիկը: Չերգեցի՞նք քիչ մը առաջ. — «Սիրտ իմ սասանի, սարսափ զիս ունի, վառն Յուդայի: Նա ոչ ա՛մաչէ, և ոչ զարհուրի սիրողն արծաթի»։ Դողով չհեկեկացի՞նք «Արծաթ սիրութեամբը», «Ի՛ջեր յերկնիցը», և մաքի խոյանքի ո՞ր երկինքն ելանք, յափշտակութեան, սքանչացման ո՞ր թափին մէջ գամուեցանք երբ «Ո՛վ սքանչելի և տեսիլ ահաւոր» Տէր յերկնիցը ողորմի, հրեշտականուագ բամբ որոտաց, կոծերու, ողբերու երկարաձգում մը թողով կտին: «Փառք ի բարձունս»ը պարզապէս լացուց ամէնքս և հառաչն իր դագաթնակէտին չհասաւ «Տէր ողորմեայ»ին տտեն. ա՛հ, չիմացա՞նք այս արտասուող բռնաստեղծութեանց վսեմ իմաստները. ինչո՞ւ ուրեմն այս գետնաքարչ սողակումը անօրէնութեան մէջ. չարիքին դէմ չարիք, վառօղին դէմ վառօղ, զրկանքին դէմ զրկանք. այս չէ՞ ամէն օրուան անսարանը կեանքին: Յիսուսի Խաչին Դողգոթային ստուերամած կարկառումէն ի վեր քսան դարեր անցած են, ի՛նչ կ'ըսեմ, 2000 տարիներ, ու տակաւին մարդիկ չեն հասկըցած այդ գիշերուան հրաշալի դէպքին այնքան բարձր նշանակութիւնը, չեն սորուած պատկառիլ ստուերներէն սուգին որ պատած է դաշտը, բլուրը, երկինքը մարդուն կտրուասին համար, և մնացած են այն վիճակին մէջ որ վիճակին մէջ էին անհաւատ ոճիւրը գործողները: Դարերն ամսերու պէս անհետացեր գացեր են. մարդն հին զգեստը չէ փոխեր երբէք:

Ի՞նչու այս ընկրկումը, ի՞նչու այս նախնայը, ի՞նչու այս յամառութիւնը ագիտութեան մէջ. ինչո՞ւ սուրբու շաչիւնը, ինչո՞ւ զէնքերու սա շառաչը: Չէք նախիր, զթած Աստուած որ արեւը կը ծագէ հուսաարուպէս բարիներուն և չարերուն, պատժոյ կատարին վրայ ուր չէր ելած ոչ մէկ ծաղիկ կամ ագնիւ խոտ, փրկ-

կութեան վարդը փթթեցուց, Գողգոթա՛ն, երբեմն չարանիծուած տեղ մը՝ որ հիմակ ա՛մուր կուռանը կ'ըլլայ Բրիստոնեային կեանքին:

Այսպէս է Աստուած. մահուան բլրակը փրկութեան սարի կը փոխէ. շանթի տեղ գութ կուտայ, անէծքի տեղ սէր, աղջամուղջի տեղ լոյս:

Այս ամէնն անոր համար որ ինչու-թեամբ զօրանայ մարդը լայց սա հակառակ ուղի կը բռնէ. ամենադժոյզն ատուպանքներէն կը յուսահատի, փանաքի ձախուռածքներու դէմ կը վարանի, թեթեւ դժուարութիւններու հանդէպ կը վհատի. Բրիստոսի Խաչին առջեւ՝ ուրկէ ուրախութիւնը, յոյսը կը ճառագայթէ՝ կը վայլէ՞ այս յուսակտուր ընթացքը. նա աշխարհի մեղքերու ընդունարան խաչը ուսին սեպ ժայռէն վերելք մը կ'ընէ «հոգին յօժար» «մենք ալ, եթէ կ'ուզենք նմանիլ Յիսուսին, պէտք է կտրենք դեպի ուկ և ապաւեր աւրահաններն երկնուոր կենցաղի, միշտ աչքերնուս դէմ ցցուած ունենալով Դողգոթաներ, ուր հասնիլը մեզ փառք է իրաւամբ:

Իրանանք թէ Բրիստոս արագահաս հրեշտակն է կտրուած սա՛ մարդկութեան, եթէ երբեմն հրեզն սիւնը Մովսէսէն ա՛ռաջնորդուած Իսրայելի ժողովուրդին փրկկութիւն բերաւ, Աստուածային օրէնքներու պահարան-տապանակը Երիքովի (պարիսպներուն) մօտ Յեսուի յաղթութիւն տանիլ տուաւ: Ասոնք ուրիշ բան չէին բայց եթէ ստուերակերպ նմանութիւններն Յիսուսի ընդհանուր գործին. զիսնանք թէ ուղղութիւնն ըզձայ գինովի պէս դանդաջող քայլերով մոլորած սա՛ մարդկութեան, այս՛, գիտնանք թէ ազնուացումը բաղձաց սա միշտ գայթակար նշաւակ գձուծ արարածներուն:

Ո՛վ մարդ, Յիսուս քեզ քու վեհ պողտօնիդ մէջ պահել ուղիւով «բարեկամ» կոչեց զքեզ, և ո՛չ ծառայ. դարձեալ կը կոչուիս «Մրդի Աստուծոյ, որդի լոյսի»՝ համբո՛յր այդ անուններուն՝ որոնք հոգիներու կը պատկանին, ճանչցի՛ր կոչումդ և արդարացուր: Ծառի պէս պտուղ տուր,

ծաղկի պէս հոտ, սարի պէս աղբււր, դաշտի պէս հաւնձք, երկրի պէս հաց, երկնքի պէս լոյս: Իրաւո՛ւնք է պահանջել անիկա, վասն զի մարդկութիւնը անհուն դաշտ մըն է որուն մեծ մշակն եղած է Աստուած իմ Յիսուս: Մարգարէները, աւաքեալները. հայրապետները, վարդապետներն ալ մշակներ եղած են, և հոն ընտիր սերմեր ցանած: Անոնք իրենց աւրինովն ուղղեցին զանոնք, մենք ալ մեր քրտինքովը ցօղենք:

Սիրելի՛ ժողովուրդ, ատոք հասկեր կապեցէք, որոմը ի թայ վանելով, միշտ նախանձախնդիր որ ձերինները նախորդներէն աւելի ազնիւ տեսակ ըլլան, ինչպէս այդ ջանքը պէտք է ունենան ձեր յաջորդները. ասոր մէջ կ'կայանայ մարդկային յառաջդիմութիւնը, փրկութիւնը. ապա թէ ոչ ինչի ահեղ խորհուրդն ազդեցութիւն մը գործած չըլլար ձեր վրայ. նոր փուշէ պատկեր կ'բոլորէք Յիսուսի համար, որպէս թէ մէկ հասարական չէր: Յորչափ մարդիկ չարանան, Գողգոթան Գողգոթա պիտի մնայ իբրեւ յաւիտենական դատապարտութիւն: Սուգ պիտի հագնին լեռները:

Կը մտածեմ թէ ի՞նչ պիտի ըլլար մարդս առանց Փրկիչի...: Ուրեմն ժանտ Բարաբայի, գիժ Յուդայի, մէկ բառով, անիծուած մարդկութեան հետ մի ըլլաք, այլ դարձէք Յիսուսին, և Անոր ինչին պատուանդանին քով բերէք բարեգործութեան՝ յաջողութեան անթառամ պատկեր, որ պէտքի տնոր փառքին արատ չբերէք, օրհնութիւններ դիզեցէք հոն փոխանակ մորթազերծ գանկերու սոսկալի իրար կարկառին...: Վտանգին մերձեցմանը, փառեցէք ինչին, իբրեւ ձեր փրկութեան միակ ապաւենին, ո՛վ լոյսի ճշմարիտ հաւատացողներ:

Երբեմն գիշեր էր, իսկ հիմայ լոյս. վա՛յ անոր որ լոյսին մէջ ալ չարին է որդեգիր:

Թող բարի Քրիստոսը հիմա տեսնէ երկրիս վրայ հաւատքի սէր մը արծարծուն, և մարդկութիւնը միահամուռ ծնրադիր իր ինչին առջեւ. թող թափէ՛ երկնային շնորհները, որպէս իր մեծ գործութեամբը ուրախանաք «որպէս զորդիս լուսոյ և զորդիս տուրնջեան», և փառաւորենք զինքը ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյն, յաւիտեանս ամէն:

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ

ԲԱՐԻ ԸԼԼԱԼՈՒ ՄԻՋՈՅԸ

Կրօնական օրերու մերձեցումն առիթ մ'է հաւատացեալին յիշեցնելու իր պարտականութիւններն առ Աստուած եւ առ ընկերս: Այդ պարտականութեանց զխաւորն է սիրել զԱստուած ի բոլոր սրտէ, եւ հնար եղածին չափ յաճախ հաղորդակցութեան մէջ գտնուիլ Անոր հետ: Եւ երկրորդ՝ նոյնքան կարեւոր՝ սիրել մեր ընկերը մեր անմին չափ, օգնութեան ձեռք կարկառել զրկուածին, տառապալիին, անօթիին: Սրդ, որքան մեր ընկերներուն, նոյնքան եւ աւելի մեր Աստուծոյն հանդէպ մեր պարտականութեանց կատարման մէջ խոշոր թերացումներ ունինք, մենք. տկար մահկանացուներս. եւ ատոր ճշմարիտ գիտակցութիւնը կ'ունենանք այն ատեն միայն, երբ մեր խղճի քննութիւնն ընելու, ինքնամիտի մտքով մեր անցեալ կեանքին անդրադառնալու քրիստոնէական բարեպաշտիկ սովորութիւնը կարենանք ունենալ,

եւ երբ խոստովանութեան եւ ապաշխարութեան Սուրբ Խորհուրդին մտադիւր կատարումով՝ սրտի ու մտքի մաքրութեամբ՝ համարձակինք մօտենալ Անոր որ մեր կեանքը, յոյսը, քաւութիւնն ու թողութիւնն եղաւ: Հայուն որոշիչ մէկ նշանը նկատուած էր հին բարի ժամանակներուն մէջ՝ Յիսուսի Ս. Մարմնոյն եւ Արիւնքին հաղորդուիլ տարուան հինգ Տաղաւարներուն մէջ, անով կազդուրուիլ, անով զօրանալ, ու ներշնչուիլ մարտի խորհուրդներով եւ զգացումներով: Հիմակ այդ գեղեցիկ սովորութիւնը մոռցուել է ընդհանրապէս, եւ գիտենք շատ Հայ-քրիստոնեաներ, մասնաւորապէս այդ մարդոց մէջ, որ իրենց մանկութեան օրերո՛ւն միայն կը յիշեն հաղորդուած ըլլալ եւ վերջին անգամ... իրենց ամուսնութեան ժամանակ, եւ այդ՝ ընդհանրապէս ձեւակերպութիւն մը կատարած ըլլալու համար, աւա՛ղ: Թէ ո՛րքան մեծ զըր-

կանքի մը կ'ենթարկենք զմեզ այդ ընթացքով, եւ թէ՛ ընդհակառակն՝ Յիսուսի մօտենալով որքան պիտի օգտուինք հոգեպէս, շատ զեղեցիկ ու համոզիչ կերպով կը բացատրէ Ֆրանսացի հռչակաւոր եկեղեցական մը, Աբբայ Բուպէ, «Բարի բլլալու միջոցը» խորագրով հետեւեալ նամակին մէջ գոր կ'ուղղէ բարեկամի մը, եւ զոր հաճոյքով կը ներկայացնենք Յարգմանաբար մեր բոլոր հաւատացեալ ընթերցողներուն, վստահ ըլլալով որ շինիչ, բարերար ազդեցութիւն մը պիտի ընէ ոչ միայն ճշմարիտ բարեպաշտներուն, այլ եւ սկիւտիկ հոգիներուն վրայ։—

ԽՄԲ.

ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Է ՀԱՂՈՐԴՈՒԻՆՔ

Սիրեցի բարեկամս .

Ի՞նծի քիչ թէ կ'ուզէք դառնալ ճշմարիտ Աստուածապաշտութեան, և ինչպիսիք միջոց մը ցուցնել, կատարելապէս բարի ըլլալու համար։ Ինչպիսիքնիդ չար կ'զգաք, դժուարահաս, դիւրագրգիւ, դեղ, զգալի, և փորձութեանց առջեւ տեղի տալու դիւրապատրաստ։ Ի՞նչպէս կարելի է այս թերութիւններէն ազատուիլ։

Իմ ցուցնելիք միջոցս է . — Բարեպաշտութեամբ և յաճախ հաղորդուիլ։

Բարեպաշտութեամբ, ըսի։ Ասով կ'ուզեմ հասկցնել թէ ձեր բոլոր բարեացականութիւնն ի գործ պէտք է դնէք, և շուրջ ճիգ մ'ընե՛ք ձեր հոգին պատրաստելու, և ազօթելու՝ խորունկ հաւատքով մը, ջերմ պաղատանքներով։ Անշուշտ ձեր ձեռքը չէ կատարեալ ջերմութեամբութիւն մը, զգալի ախտիւն մը ձեռք բերել, բուն զգածմամբ մը յուզուած արտասուել։ Բայց ձեր ձեռքն է առնական կամեցողութեամբ մը ձկտիլ սիրելու մեր Տէրը, ահոր ընել կարգ մը նախապատրաստական զոհողութիւններ, խոյս տալ արտաքին միտազբաղութիւններէ, մտամբիով և խոնարհ արտով, ու երկիւղածութեամբ արտասանել ազօթ քները։

Բարեպաշտութեան հաղորդութեան նշանակութիւնն աւելի լաւ կրնաք ըմբռնել, եթէ ուշադրութիւն ընծայէք հակառակին, Հաղորդութեան Ս. Խորհուրդին թեթեւօրէն մօտեցողներուն վրայ, որ կուգան անհոգ

անտարբերութեամբ մը, առանց իրենց միտքն ու հոգին յաւած ըլլալու այն մեծ Խորհուրդին որուն կը մասնակցին, առանց խօսելու Յիսուս Քրիստոսի հետ, առանց գրեթէ անոր վրայ խորհելու։ Այս կերպ հաղորդութիւն ալ կրնայ արդիւնաւոր ըլլալ, եթէ հոգին զրկուած չէ շնորհքէ, և եթէ դիտումները բարի են։ Աստուած իր անհուն բարութեամբ կ'առատապնէ մարդկային հոգիին մէջ արդէն գտնուող սրբարար չնորհքը։ Բայց այդ կերպով հաղորդուիլ մեր Յիսուսն այնքան արժանի չէ, և չտեսրը կը մղէ ըսելու . — «Հաւագոյն կը համարիմ չհաղորդուիլ, քան թէ այնքան թեթեւօրէն մօտենալ Աստուծոյ»։

Եւ յիշուի, սիրելի՛ բարեկամս, պէ՛տք է քեթեւօրէն վերաբերուիլ Աստուծոյ հետ։ Անիկա իրաւունք ունի լաւագոյն վերաբերուիլ մը, աւելի՛ տաք և վիհանձն ընդունելութեան մը ձեր կողմէ։ Բայց նոյն Աստուծային Խորհուրդէն հեռու մնալու ձեր որոշումը սխալ պատճառների մը արդիւնքն է։ Փոխանակ ըսելու . «Ա՛յ չեմ հաղորդուիլ», պէտք է ըսել . «Հաւագոյն կերպով կը հաղորդուիմ»։ Ստուգիւ, ասիկա ձեզմէ՛ կախում ունի, որովհետեւ Աստուած ձեզմէ չի մերժեր իր շնորհքը։ Եկեղեցին բնաւ չէ պատուիրած ձեզի քեթեւօրէն եւ յաճախ հաղորդուիլ, այլ հոս Եղածին չափ բարեպաշտութեամբ, ջերմութեամբօրէն։

Այսպէս լրջօրէն և լաւ պատրաստուած վիճակի մէջ հաղորդուիլը մեծապէս պիտի աւելցնէ ձեր մէջ սրբարար շնորհք մը, այսինքն աստուածային կեանք մը, և այդ այնքան աւելի, որքան յաճախակի կատարուի։ Այդ կերպով հեազհետէ պիտի համակուիք աստուածայնութեամբ, Յիսուս Քրիստոսը պիտի զգենաք, Առաքեալին գեղեցիկ բացատրութեամբ, իր կեանքովը պիտի ապրիք, և պիտի կրնաք գոչել Ս. Պօղոսի հետ . «Եւ չեմ որ կ'ապրիմ, այլ Յիսուս է որ կ'ապրի իմ մէջս»։ Եւ Յիսուսի կեանքովն ապրելով, իր ճաշակները պիտի ունենաք, իր հակամիտութիւնները, իր մտածումները, իր սովորութիւնները, և իր Ս. Հոգիին բարձրութիւնն ու վիհանձնութիւնը։ Իր ուժը, իր քաղցրութիւնը,

իր խոնարհութիւնը, իր մաքրութիւնը, իր գթութիւնը ձեռք պիտի բլլան, ու պիտի կրնաք բոլր Առաքեալին հետ. «Ես բոլորովին կը գտնուիմ Անոր մէջ որ զիս կը զօրացնէ»:

Այո՛, հազարդուելով, ամենակարող մը պիտի բլլաք դուք: Զօր, Սօնի, որ մեծ Քրիստոնեայ մըն էր՝ Հազարդութեան Ս. Խորհուրդին ջերմաւորութենէն մօտեցող մը բլլալով, բառն է. «Յաճախակի Ս. Հազարդութեան մատչելէն դուրս, յաջորդական անկումներ և վերականգնումներ կան միայն: Ճշմարիտ ուժը սեփականութիւնն է Քրիստոնեային, որուն մէջ կը բնակի Յիսուս շարունակ, Ս. Հազարդութեան միջոցաւ: Երբ մարդ զԱստուած ունի սրտին մէջ, երբեք անձնատուր չբլլար»:

Դուք, սիրելի՛ բարեկամս, ցաւ կը յայտնէք որ շարունակ անձնատուր կ'ըլլաք ձեր կիրքերուն, և կը զարմանաք ասոր համար: Ես հակառակին պիտի զարմանայի: Մինակ էք սոսկալի թշնամի մը դէմ ձեր մկած պայքարին մէջ, ինչպէս պիտի կարենաք անոր դիմադրել և յաղթել: Մեր Տէրը ձեր սրտին մէջ կանչեցէք, միայնէք անոր, և այն տանն պայքարողներն երկու պիտի բլլան: Յիսուս պիտի տայ ձեզի անպարտելի կորովը, զօրավիզ պիտի բլլայ ձեզի, յաղթական պիտի ընծայէ զձեզ, ու անձնատուր չպիտի բլլաք այլեւս:

Հազարդութեանց՝ ք, և մեկուր պիտի բլլաք: Աստուածային Հազարդ ցանկական կիրքերու դեղթափն է, բառն են Ս. Հայրերը: Զգալով յաղթութեան անտաակ չընեն զձեզ ան, չսպաննեն զէջ բնագոյները, չիջնեն փորձութեան տգեղ պիծակին խայթոցը: Բայց ուժ կուտայ անոնց դիմադրելու, անոնցմէ բնու յիշունաւորուելու, մեր մէջ յառաջ կը բերէ այն յաղթական զգաստութիւնն որ հոգիի գեղեցիկ առողջութիւնն է:

Հազարդութեանց՝ ք, և խղցր ու խոնարհ պիտի բլլաք, փոխանակ բլլալու դիւրազրգիւ ու բարկացող, ինչպէս եղեր էք մինչեւ հիմա: Աստուածային Նշխարն իր նկարագիրը պիտի տայ ձեզի: Խոնարհ է ան. չի դժգոհիր ու կը լռէ՝ երբ կը խրոխտան ու կը թշնաման զինքը: Զի դի-

մադրեր, կը համակերպի: Զայն կ'առնեն, վեր կը վերցնեն, վար կ'իջեցնեն, կը մանրեն: Կը թողու որ ընեն: Անիկա ձեզի պիտի սորվեցնէ անձնագործ բլլալ, ու լռել՝ երբ ձեր բերնէն գէշ բառ մը ելնելու վրայ է, զոհեր տալ բերելու համար ձեր շուրջը:

Հազարդութեանց՝ ք, և աւելի երջանիկ պիտի բլլաք, որովհետեւ սէր և խաղաղութիւն պիտի ունենաք ձեր շուրջը զատնուշներուն հետ: Քրիստոնեայի մը ներքին երջանկութիւնը չի կազմուիր գիւցադնական մեծ առաքինութիւններով, խստամբերութեամբ և հոգեկան յափշտակութեամբ: Ատիկա կը կազմուի այնպիսի բաներով զորս կարելի է պզտիկ առաքինութիւններ կոչել, այն է համբերութիւնը, քաղցրութիւնը, ներողամտութիւնը, աչքերը դոցելու կամ շատ լաւ տեսած բաները չնշմարելու արուեստը, զայրացնող հանգամանք մը տանող խօսակցութեան մը նիւթը փոխելու արուեստը, վերջապէս անհաճոյ խօսքը չսեղու և ուրիշ անհաճոյ խօսքով մը չպատասխանելու արուեստը: Մեր Տէրը, քաղցր և խոնարհ սրտով, լուռ՝ երբ իրեն կը զարնէին գատաւորին ներկայութեանը, լուռ նաեւ երբ կը թրշնամանէին զինքը, պիտի սորվեցնէ ձեզի այն հիանալի արուեստն որ կեանքի երջանկութիւնը կը կազմէ:

Բարեպաշտութեամբ և յաճախ Ս. Հազարդութեան մօտենալը ձեզի համար ուրիշ առաւելութիւններ ալ պիտի ունենայ: Հետեւեցէք, ուրեմն, ցուցուցած միջոցիս, և բարի՛ պիտի բլլաք, և ա՛լ չպիտի մնաք այն ճախճախուաքին մէջ ուր կը տապալուր կիւք և որմէ կը դժգոհիք այնքան երկար տաննէ ի վեր: Յիսուսի հետ հպման մէջ գտնուելով, ձեր հոգին պիտի լեցուի լոյսով ու բարութեամբ, և պիտի զգայ թեւերու բուսնիլը, որոնք զինքը պիտի տանին ճշմարտապէս աստուածային կեանքի մը գեղեցիկ սահմաններուն մէջ:

Ս. ԲՈՒՂԷ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՀԱՅՐԵՐԸ

Հայ. Եկեղեցին Մեծ Պահոյ մի' այն շա-
բաթ օրերը կը կատարէ սուրբերու տօնա-
խմբութիւն, կիրակի օրերը միշտ մնալով
Տէրունական, և շաբթուան միւս օրերը՝
ապաշխարութեան յատկացուելով:

Սուրբերու ամէնուն կեանքին վրայ ալ
կարգով դրել շատ երկար պիտի ըլլար.
մենք տուած կ'ուզենք ճանչցնել մասնա-
ւորապէս Հայ Սուրբերը, մարտիրոսներ ըլ-
լան անոնք՝ ճշմարիտ Աստուծոյ սիրոյն հա-
մար վկայուած, պաշտելի կոյտեր թէ Եկե-
ղեցւոյ սրբազան Հայրեր: Այդ կարգի ե-
րեք սուրբերու յիշատակը տօնուեցաւ նա-
խորդ շաբթուն, մարտ 20, Յովհաննու Երու-
սաղիմայ հայրապետին հետ:

Ատոնց առաջինն է ՅՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ
Իմաստասէր կաթողիկոսը (Է. Դար): Աշու-
կերտն էր խորանազգեաց սրբակրօն ճգնա-
ւոր վարդապետի մը, Թէոդորոս Բաթնա-
ւորի (քրճաղգեսց), նշանաւոր հայկական
և հելլենական ուսմամբ և աստուածաբա-
նութեամբ: Օձնեցին ևս իր հանճարին մե-
ծութեամբ արժանաւոր սան մ'եղած է Բա-
թնաւորին, սնոր սրբակրօն ճգնութիւնն
ալ միացնելով իր վրայ: Ապրած է այնպի-
սի դարու մը մէջ, երբ Հայաստան աշ-
խարհը թատերալայրը կ'ըլլար ամէնէն ա-
րիւնալի դէպքերուն: Արաբական արշա-
ւանքներու ժամանակն էր, և Հայոց եր-
կիրը վարչութեանը տակ կը գտնուէր Ոս-
տիկաններուն, որոնց վրայ Յովհան Իմաս-
տասէր կրցած էր հզօր ազդեցութիւն ձեռք
բերել իր բարոյական նկարագրով և ար-
տաքին շքեղ հանդերձանքով՝ ճիշտ հակա-
պատկերն ըլլալով ներքինին: Կը պատմուի
թէ Վիլի Ռատիկանն այնքան ներբողալից
կերպով խօսեցաւ Հայրապետին վրայ՝ ա-
րար Ամիրապետին, որ այս վերջինը փա-

փաք յայտնեց զինքը տեսնելու անձամբ ի
Դամասկոս, ուր մեծ պատիւներու առաք-
կայ եղաւ Օձնեցին: Յիշատակելի է իր
պատասխանն առ Ամիրապետն, սնոր հար-
ցումին՝ թէ ինչո՞ւ այնքան շքեղ հագուստ-
ներ կը հագնի, մինչ պէտք է որ ըստ քրիս-
տոնէական կրօնի պարզ, խոնարհ, զգեստ-
ներ կրէր: «Ատոր պատճառն այն է որ,
ըսած է երանելի Հայրապետը, մենք սն-
կարող ըլլալով կատարել քրիստոնէական
առաջին դարերու սուրբ մարդոց սքանչե-
լի գործերը, որով միայն մարդիկ բարու-
թեան կը մղուին, ստիպուած ենք մեր փա-
ռաւոր հանդերձանքով անոնց վրայ ազդել»:
Բայց Ամիրապետը գայթակղած կը մնար,
չէր համոզուած. ուստի Ս. Հայրապետն
ստիպուեցաւ՝ առանձին տեղ մը՝ ցուցնել
այն խառազը զոր մերկ մատիկին վրայ հա-
գած էր: Սոսկոյց Ամիրապետը՝ իր ձեռքն
այդ կոշտ հագուստին դպցնելով և յա-
պուշ կրթեցաւ թէ մարդկային մարմին մը
ինչպէս կրնայ տուկալ այդ ապտիճան ան-
հանդուրժելի խոտամբերութեան:

Կաթողիկոսութեան առաջին տարին ժո-
ղով գումարած է Դուին, ժողովուրդին մէջ
մտած անկարգութեանց վերջ տալու համար:
Օրուան ամենամեծ վրդովմունքն յունածէս
Հայոց կողմէ էր, որ կը պնդէին թէ պէտք
է խմորեալ հացով և ջրախառն բաժակով
պատարագել, «Սուրբ Աստուած»ն առանց
«խաչեցար»ի ըսել, են: Այդ ժողովը նը-
զովեց հերետիկոսները, և 32 կանոններ
սահմանեց Եկեղեցւոյ բարեկարգութեանց և
ծիսից վրայ: Նշանաւոր է այդ առթիւ Օձ-
նեցիի առեւտրաւարքիւնը, որուն մէջ կ'ե-
րեւայ խմորեալ ճոխութիւն և բարձրու-
թիւն, Ս. Գրոց, նաև այլ գիտութեանց
խորունկ հմտութիւն: Ունի ճառեր՝ Ընդ-
դեմ երեւոքականաց, և Ընդդեմ Պաղիկ-
եանց: Երեւոքականն՝ այն հերետիկոսներն
էին, որ Բրիտտոսի տնօրէնութիւններն ոչ

թէ իրական, այլ տու աչօք կը համարէին: Իսկ Պաշտօնական ինչպէս ընծայուած պաշտամունքը կռակապաշտութիւն կը սեպէին, և պատկերաց յարգանքը՝ աւելորդապաշտութիւն: Աւելորդ կը նկատէին ծէսերն և արարողութիւնները, և հակառակ էին հոգեւոր դասակարգութեան, Խորհուրդներու, ևն.: Ասանց դէմ աղբու գրչով մը կը պայքարի իմաստասէր Կաթողիկոսը, և նոյն իսկ Ս. Գրոց վկայութիւններով կ'ըմբերանէ զանոնք: Ունի նաև ճառ մը՝ Յաղագս կարգաց եկեղեցւոյ որ մեկնաբանութիւն մ'է Հայ Եկեղեցւոյ Ժամակարգութեան: Ունի ուրիշ ճառեր ալ, և իրեն կ'ընծայուին մէկ քանի շարականներ: Իր նշանաւոր մէկ աշխատութիւնն եղած է և Եկեղեցւոյ հին Հայերուն և Ժողովներուն սահմանած կանոնները դասուորել, և անոնց գործադրութեան հսկել: Կաթողիկոսութեան կոչուած 717ին, 11 տարի պաշտօնավարելէ ետքը, արգարի մահով վախճանեցաւ 728ին:

* * * Հին տօնացոյցին մէջ յիշուած չեն ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՐՈՏԵՆՅԻ և ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԼԱՅԻ, որ Տօնացոյցի վերջին կարգադրութեան ատեն դրուած են միւս Յովհաննէսներուն քով: Երկուքն ալ Սիւնեաց աշխարհին Տաթևու վանքին փառքը կը կազմեն (Գրիգոր՝ աշակերտ Որոտնեցիի): Մեծ հմտութեան և եւանդի տէր Ս. Հայրեր, ապրած Ունիթոսներու ամենէն գործունէաց Ժամանակին (ԺԴ. դար), ամենամեծ ախոյեանն եղան Հայ Եկեղեցւոյ աւետարանական անմուլար վարդապետութեանց, և յաջող պայքար մը մղեցին լատինականութեան դէմ, որ ինչպէս միշտ՝ զրամ, գիտութիւն, խոստում կը շայլէին հաստատուելու ի Հայս, ձուլելու զանոնք Հռոմէականութեան մէջ: Երկուքն ալ նշանաւոր եղած են իրենց թողած երկամիտութիւններով: Բայց Գրիգոր Տաթևացին աւելի՛ բախտաւոր գտնուած է, իր մեծահատոր գործերէն մէկ մասը տպագրուած ըլլալով: Համոզուած հաւատացեալ մը, հզօր միտք մը, մեծ պայքարող մը եղած է՝ Տաթևացին, որ կրցած է հիմնական ազդեցութիւն մը ունենալ իր Ժամանակին և ապագայ Ժամանակներու վրայ:

Տեղւոյ անձկութիւնը արգելք եղաւ մեզ զԺրտաբար աւելի երկար խօսիլ Հայ Սուրբերու այս հիմնադր շարքին վրայ, որոնց վերջին երկուքին մասին տող մը իսկ չէ նուիրուած Հ. Գրեգորի Զարբանէլեան Վենետիկցի վարդապետին «Հայկական հին դպրութեան» մէջ, և որոնց վրայ հոյակապ գրուածք մը ունի Գեր. Տ. Բաբգէն Մ. Վ., իր հրատարակած Լոյսին մէջ (1905 Մարտ 12, թիւ 19):

Ահա՛ երանելի Սուրբեր, Հայ Եկեղեցւոյ հարազատ զաւակներ, որոնք խօսքի ու գրի ուժով, քարոզով ու մատենագրութեամբ ստացած են մեծ իրաւունք՝ խորունկ յարգանքի և պաշտանքի, և որոնց գործերուն վերծանումը մեծապէս չինիշ պիտի ըլլար, այսօր իսկ, քսաներորդ դարուն:

* *

Սրբոյ Հօրն մերոյ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍՍԻՒՈՐԶԻՆ յիշատակ չարչարանաց եւ մեծ նորա ի վիրապն

Հայ. Եկեղեցին երեք անշատ օրեր յատկացուցած է իր բազմեւթաւ հայրապետին՝ Սրբոյ Հօրն մերոյ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍՍԻՒՈՐԶԻՆ: Առաջինը՝ հազուադէպ բացառութեամբ — արդիւնք Աւետման տօնը (Ապրիլ 7) նոյն օրուան զուգադիպելուն — անխափան կը կատարուի Մեծ Պահոց հինգերորդ եօթնեկին շաբաթ օրը: Անոր պատմութիւնը քաջածանօթ պէտք է ըլլայ ամեն Հայու, գոնէ ամէն ճշմարտիւ քրիստոնեայ ու բարեպաշտ Հայու, ուստի շատ ամիոփ յիշատակութիւն մը բաւական կը համարինք:

Հաւատացեալ և անդրանիկ թագաւորին մերոյ Արքարու օրով՝ Առաքեալներու միջոցաւ քրիստոնէութեան սերմը ցանուելէ և անոնց արիւնով Հայոց Երկիրն ոռոգուելէ իբր երեք դար ետք էր որ երկնային լոյս ծագեալ ի յերկրի ցուցաւ Պայծառացեալ փայլմամբ ի յարիւռոյն կենաց, Որով հերքեցաւ իսաւար Թանձրամած Հայաստանեայց ազգի,

Եւ տեսին զլոյս շնորհաց Ս. Հոգւոյն:

(Շարական)

Այդ լոյսը բերաւ Սուրբն Գրիգոր, որդի Անակի՝ Պահլաւունեաց ցեղէն, որ Սասանեան Արտաշիր թագաւորի թելադրու-

Թեամբ դաւով սպաննեց Հայոց Խոսրով մեծ թագաւորը, և ինք ալ Հայոց զօրքերէն պաշարուելով ինկաւ Երասխ գետն և հեղձամահ կորաւ 25 լին։ Նոյն ինքն Խոսրովի հրամանով սուրէ անցունցաւ Անակի ամբողջ ընտանիքը, և միայն Գրիգոր կըրցու իր ստնտուին միջոցաւ փախցուել Կեսարիա, ուր կրթուեցաւ քրիստոնէական ուսմամբ, ամուսնացաւ, և ունեցաւ երկու զաւակներ՝ Վրդանէս և Արիստակէս, որ ապագային իր հոյակապ գործը պիտի շարունակէին։

Խոսրովի մահէն ետքը՝ Արտաշիր եւս հրամայեց կոտորել Խոսրովի գերդաստանը, և կրցան ազատուել միայն Խոսրովի դուստր և Տրդատ։ Այս վերջինը փախաւ Կեսարիա և յետոյ Հռոմ, որ նշանաւոր եղաւ իր քաջութիւններով, և 286 թուականին Հռոմայեցւոյ օժանդակութեամբ դարձաւ Հայաստան, իրեն հետ բերելով Ս. Գրիգորը, զոր արդէն ճանչցած էր Հռոմի մէջ, առանց գիտնալու թէ իր հօր սպանչին զաւակն է և քրիստոնէական կրօնքը կը դաւանի։ Նրիկայի մէջ յայտնուեցաւ իրեն այդ պարագան, երբ Ս. Գրիգոր չուզեց պաշտօն մատուցանել Անահիտ չաստուածունէոյն, զոր Հայք մայր կը համարէին զգաստութեան, և կ'անուանէին «ոսկեծին», «ոսկեմայր»։ Գրիգոր հաւատքի և հօր կամքի գերագոյն կորովով մը ընդդիմացաւ Տրդատի ստիպումներուն, և սիրով յանձն առաւ բաղմադրի չարչարանքներն որոնց ենթարկուեցաւ, և որոնք մանրամասնօրէն պատմուած են Յովհաննէս վարդապետ Պրլուզի յօրինած գեղեցիկ Ծարականին մէջ, որ կ'երգուի շարաթ օրն իբրեւ «Օրհնութիւն»։ Հուսկ ուրեմն Տրդատ հրամայեց նետել երանելին Արտաշատու խոր վիրապը, ուր անշուշտ սովամահ պիտի կորսուէր տանըջորս երկար տարիներու միջոցին, և թէ բարեսէր կին մը զայն չկերակրէր։

Այս չարչարանքի յիշատակն է որ կը տօնէ շաբթուս Հայ. Ս. Եկեղեցին, և որ երախտագիտութեան խորունկ զգացում մը պէտք է արթնցնէ ամէն հաւատացեալ Հայու սրտին մէջ, և հիացումով պէտք է լեցնէ զմեզ ի տես այն զօրաւոր կամքին և

հաստատուն, ամրապինդ հաւատքին, որ բաւական եղաւ ամբողջ աշխարհ մը յիշաւը՝ փրկարար կերպարանափոխումով մը, և կրօնքի լոյսին հետ զաւգընթացաբար ճամբայ բանալ քաղաքակրթութեան լոյսին ալ։

ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿՈՒՆՔ

ՈՐՔ Ի ՍԵՐԱՍՏԻԱ ԿԱՏԱՐԵՑԱՆ

Քրիստոսի 313 թուականին Կոստանդինոս թագաւորը Միլան քաղաքէն հրատարակած հրովարտակովը կրօնքի կատարեալ ազատութիւն տուաւ, որով երեք դարերէ ի վեր հալածուող քրիստոնէութիւնը Հռոմէական աէրութեան գլխաւոր կրօնքն եղաւ։ Ասիական գաւառներու վրայ կ'իջիւնէր Կոստանդինոսի ակոռակիցը, Լիկիանոս, որ թէև առ երեստ հրաաարակեց կայսեր հրովարտողը և գործադրեց, բայց ի սրտէ օրսրիմ խնամի էր քրիստոնէութեան, և չկրցաւ այդ ներքին զգացումն երկար ատեն ծածկել։ Արգիլեց հոգեւորականներու ժողով գումարելը, մեծ քաղաքներու եկեղեցեաց մէջ պաշտօն մատուցանելը, բանակին մէջէն քրիստոնեայ սպաներն արձակեց և ղինուորներուն հրամայեց որ կուսքերու զոհն։ Փոքր Հայք այն ժամանակ Հռոմէական իշխանութեան տակ էին, և բնականաբար ենթակայ նոյն ճշդումներուն։ Սերաստիոյ մէջ 40 ղինուորներ ընդդիմացան տտոր։ Յայտնաւորքը մանրամասն կը յիշէ ատենց անուններն և նահատակութեան և հրաշալի գործերուն պարագաները։ Անոնք Սերաստիոյ Ագրիկոլայոս դատաւորին դէմ անվեհեր պատասխաններով պաշտպանեցին քրիստոնէական հաւատքը և հաստատուն մնացին նոյն Ս. Կրօնին մէջ, որով չարաչար տանջանքներու ենթարկուեցան։ Կեսարիոյ Լիկիաս դուքսն ալ նոյն քաղաքը գալով Ագրիկոլայոսի հետ դատեց սուրբ վկաները, որոնց անյողղորդ հաւատքը տեսնելով՝ հրամայեց քարով զարնել անոնց բերաններուն։ Իսկ դահիճները չփոթած սկսան զիրար ծեծել։

և երբ դուքսը վայրացած անձամբ ուղեց քար նետել սուրբերուն վրայ, քարը վրիպեցաւ ու դատաւորին զարնուեցաւ: Լիւսիսա բոլորովին կատղած՝ հրամայեց քաշկուտել զանոնք դէպի բանտ, ուր՝ Տէր Յիսուս անոնց երեւնալով՝ զիրենք խրախուսեց: Դատաւորը նոյն երեկոյին հրաման ըրաւ որ քաջ զօրականները կապեն ու մերկացուցած՝ նիտեն Սեբաստիոյ լիճը. և որովհետեւ ձմեռուան սաստկաշունչ եղանակին մէջ էր՝ ծովակն սկսաւ անմիջապէս սառիլ օգին խառութենէն, և անոնց սուրբ մարմինները ճեղքատուեցան սառերու կարծրութեամբը, այնպէս որ անոնցմէ մէկը ա՛լ չկրնալով հանդուրժել՝ դուրս վազեց և կեանքը փրկելու համար գնաց ապաստանեցաւ մերձակայ բաղնիքը, զոր կանխահոգ մտածութեամբ՝ առաջուց պատրաստած էին լճին քով. սակայն ընդ փոյթ հոգին փչեց՝ երկրաւոր և երկնաւոր կեանքէն միանգամայն զրկուելով: Անոր սուրբ ընկերները կ'ողբային եղկելին կորուստը և կը խնդրէին Յիսուս Փրկչէն զիրենք երեսէ չթողուլ: Եւ ահա Աստուածային ճառագայթը նոյն գիշեր ծագեցաւ լճին վրայ և երկնային ձայն մը զիրենք կը քաջալերէր. սառնամանիք հալեցան ու երկւեցան նաեւ լուսեղէն պսակներ 39 հատ, սուրբերուն թուոյն համեմատ. զայս տեսնելով պահապաններէն մէկը, որ բաղնիքին վրայ վերակացու գրուած էր՝ ձայն տուաւ ընկերներուն ըսելով՝ «Ե՛ս ալ քրիստոնեայ եմ» և ինքզինքը նետեց ծովակը՝ նոյն սուրբ վկաներուն հետ նահատակուելու և պսակուելու համար անոնցմէ պակասածին տեղ. ասով անոնց թիւը նորէն 40ի բարձրացաւ՝ ինչպէս որ Յուդայի տեղ Մատթիան ընտրուելով առաքելոց թիւը նորէն եղաւ 12, և որդնալից սատկող Վասակին տեղ ալ Մոգպետը քրիստոնէական հաւատքն ընդունեց ու նահատակուեցաւ Ղեւնդեանց սուրբ քահանաներուն հետ:

Քառասուն մանուկներն ամբողջ գիշերը դողդղալով տառապեցան սառնապատ լճին մէջ, որուն ջուրը բոսորագոյն ներկուեցաւ անոնց վէրքերէն հոսած արիւնով. առաւօտուն զանոնք հանեցին կիսամեռ վիճակի

մէջ և տապաքներով խորտակեցին անոնց ծունկերն ու ոսկորները. և մարմինները սալերու վրայ բեռցուցած՝ տարին գետին եզերքը: Եւ որովհետեւ տակաւին կենդանի էր անոնցմէ կրտսերագոյնը, որուն տնունն էր Մելիտոն, մայրն անձամբ շալկեց ու սալերուն ետեւէն տարաւ զանիկա, որ ճամբան հոգին աւանդեց: Այնուհետեւ այրեցին անոնց մարմինները և նետեցին գետը. իսկ սուրբ վկաները տեսիլքի մէջ յայտնուեցան Սեբաստիոյ կաթսկոպոսին, որ գիշերով գնաց գետին մէջէն ամփոփեց անոնց սուրբ նշխարները, որոնք տատլի պէս կը փայլէին և զանոնք մեծ պատուով թաղեց:

Ասոնց նահատակութիւնը տեղի ունեցաւ 316 թուականին: Այս մանուկներուն նետուած լճին վրայ, որ գրեթէ ցամքած վիճակի մէջ է, մասնաւոր տեղ մը շինուած է այժմ և մեծ ուխտատեղի է բոլոր հաւատացեալ քրիստոնէից, որուն վրայ շատ համակրանք կը խօսին մեր սեբաստացի ազգայինները իբրեւ ականատես վկայ: Հայ Եկեղեցին 40 կանթեղներով կը ներկայացնէ այս սուրբերուն յիշատակը իբրեւ օրինակ նոյն լճին. անոնք կարմիր ներկուած են իբրեւ օրինակ անոնց վէրքերէն հոսած արիւնն. պատրոյզները կը ներկայացնեն անոնց մարմինները և բոցերը՝ անոնց վրայ եղած լուսեղէն պսակները:

Սուրբ Քառասնից համար ներբողական ներ հիւսած և անոնց պանծալի կենսագրութիւնն ըրած են Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նիւսացի ու Եփրեմ Խուրի Ս. Հայրապետները, և աւելի ընդարձակօրէն գրած է Սիսիանոս մեծ վարդապետն Հայոց՝ Սեբաստիոյ սուրբ տաճարին մէջ: Հայ Եկեղեցին ասոնց յիշատակը կը կատարէ ամեն տարի Մեծ Պահոց չորրորդ եօթնեակին շաբաթ օրը, իսկ Յոյն Եկեղեցին իբրեւ անշարժ տօն մարտ 9ին անխափան, և այն օրը Կ. Պոլսոյ յոյն հասարակութիւնը գարնանային ծաղիկներ հաւաքելու համար կ'երթայ Տօլմա Պահճէի պարտէզն ուր ունին մասնաւոր այսգլուս յանուն սրբոց Քառասնից:

Գրութարի մէջ մանուկ բառը, միշտ ան-

չափահաս տղայ չի նշանակեր: Նստոնդամ կայտառ ու քաջամարտիկ երիտասարդներ այսպէս կը կոչուին, ինչպէս Ս. Գրոց եւ րեք մանկունքը, Սեդրաք, Միսաք եւ Աբեղնազով զոր Նաբուգոդոնոսոր հնոցի բոցին մէջ նետեց: Այսպէս նաեւ այս քառասուն Մանկունք կոչուածները: Յիսուս անգամ Տիբերիոյ ծովուն եզերքը ձկնորսութեամբ զբաղող իր առաքեալները այս անունով կոչեց ըսելով. «Մանկունք, միթէ ունի՞ք ինչ ուտել»:

Սուրբ Բառամանից պատմութիւնը մեր Ս. Ղեւոնդեանք ալ յիշած են իրենց տառապալից բանտարկութեան միջոցին, իրրեօրինակ, ինչպէս կը նկարագրէ Եղիշէ Պատմագիրը:

Օրուան չարականն է «Այսօր ընդ անմարմնոցն» իւր սարօքն եւ յատուկ Մանկունք մ'ալ ունի ստեղծ որ է «Լուսապակացն»:

Սկիւսար

Գ. Կ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

ԱՂՕԹՔ ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱԻՈՐԻՆ

«ՏԵՐ ԱՄԵՆԱԿԱԼ»Ը ՅԱՆԳԱԻՈՐ

(Դրարարէն)

Ամենակալ Տէր, Եհովայ մշտակաց,
Որ Աստուածն եւ Աբրահամի, Սահակի
Եւ Յակոբի ու անոնց սուրբ զաւակաց,
Ամենակալ Տէր, ինձ ներհ'
Մեղքեր անթիւ առագնեք:

Դուն որ Երկինքն անծայրածիր, աստղալիր,
Ըստեղծեցիր զօրութիւնովդ ոչինչէն,
Նոյնպէս երկիրս այս հողեղէն ու զարդն իր,
Ամենակալ եղն:

Որ ամեն բան կը դողդղանայ, սարսափի՛,
Ինչ զօրութեանդ անեղ վախին պատճառաւ,
Կը պաղստի՛մ, յոռուած դողովն սարսափի,
Ամենակալ եղն:

Մքրութեանդ մեծ վայելչութիւնն է անբաւ,
Եւ աստիկ է ըսպառնալիքդ չարերուն.
Բայց աւեշխն գութիդ անհուն է մեզ բաւ:
Ամենակալ եղն:

Դուն ողորմած, Բարձրեալ Տէր, բազմագութ,
Շուտ կը զրոյսաւ չարեաց վրայ մարդերուն,
Զի Դու Աստուած, սեր եւ միայն, հաւնակ գութ:
Ամենակալ եղն:

Դուն չի դրոյր ապաշխարանք այն արդար
Աքրահամին, Իսահակին, Յակոբին
Որոնք անմեղ՝ սիրեցին Քեզ անդադար:
Ամենակալ եղն:

Այլ դրոյր ինձ մեղաւորիս ապաշաւ.
Զի մեղքերս շատ են առագնէն ծովերուն,
Զարուքիւններս շեռնահանգոյն քրգացուն:
Ամենակալ եղն:

Այնքա երկինք վերցնելու չե՛մ արժան,
Ոչ ալ նայի, ինչեղ բարձունքն անասնուն,
Շատութեան մեղքերուս պիղծ ու դաժան:
Ամենակալ եղն:

Կորացած եմ կապանքներէ երկաթի,
Դամուած ամուր շատրմախաղ կիսերուն.
Հանգիստ չունի՛մ, սիրս բոցերու մեջ կ'այրի՛.
Ամենակալ եղն:

Մտնաքիւնդ գրգռեցի եւ շարութիւն գործեցի
Ու ցանկութեան շիրք պատկերներ անարգ, պիւ
Կանգնեցին հոս՝ իմ արքիս մեջ պղղնձի:
Ամենակալ եղն:

Եւ հիմա, Տէ՛ր, կը կրթիմ ծունկն իմ արքիս:
Եւ գեհնաւած փռուելով սուրբ ոսկիդ սակ,
Բաղցրութեանդ կը հայցեմ որ ողորմիս:
Ամենակալ եղն:

Մեղայ, Տէ՛ր իմ, կը զրոյսաւ արդ դառնագին,
Մեղայ միտքովս, մեղայ հոգովս, մեղայ միջս.
Մեղքերս անթիւ կը գցուին ցանց իմ առջին:
Ամենակալ եղն:

Կը պաղստի՛մ, ներհ՛ ինձ, Տէ՛ր, ներհ՛ Դուն.
Եւ բազմաթիւ զարչ մեղքերուս հաւեհաս,
Մի՛կորցնեք զիս Տէր, ինչդեմ, Դո՛ւք անհուն.
Ամենակալ եղն:

Մի՛ բարկանար յաւեհ, մ'յիշեմ իմ մեղքեր,
Եւ մի՛ քրնաւ պատճառներ՝ շարութեանք
Երկրի սակ իջնողներուն հետ զիս, Տէ՛ր.
Ամենակալ եղն:

Զի Դու, Աստուած, զրոյսագողին եւ Աստուած,
Ինձ ալ ցուցն'ը բարեւարտութիւնդ անհուն
Ինձի ալ, որ անարժան եմ ու ինկած:
Ամենակալ եղն:

Անհուն, անցաի ողորմութեանդ համեմատ,
Թե կեանքի սառ ինձ, իմ օրերուս մեջ անեմ,
Պիտի օրհնեմ ըզբեզ ընդ միշտ, անընդհատ:

Ամենակալ եղև:

Երկրնքի սուրբ հրեշտակներ, Տէր, համայն
Կ'օրհնեն ըզբեզ, փառաբանեն անդադար .
Բուկդ եմ բոլոր փառքն ու պատիւ յաւիտեան:

Ուլաշ (Սըվազ)

ՅԱԿՈԲ Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՔԱՐՈՋՆԵՐ

ՆԱԽԳԻՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ինչ որ կը բեղադրէ մեզի Դատաւորին
Առակը.)

Հայաստանեայց Եկեղեցին Մեծ Պահոց
կիրակներու աւետարանական ընթերցում-
ները կարգադրած է այնպիսի կերպով, որ
անոնք աստիճանական յաջորդութեամբ մը
պատկերացնեն Քրիստոնեային պարտքը,
ճշդէն ուղեգիծն ուրկէ պէտք է ընթանայ՝
Աստուծոյ և մարդուն հանդէպ ունեցած
պարտականութեանց մէջ չթերանալու հա-
մար: Այդ ընթերցումներուն մէջ պար-
զուած կը տեսնենք Քրիստոնէական ամե-
նավսեմ սկզբունքները. թէ ի՞նչ բարիք որ
գործենք, ողորմութիւն, պահք, աղօթք,
պէտք չէ կատարենք ցոյցի համար, այլ
գաղտնի, լոկ բարիքը գործելու անուշ գո-
հունակութիւնն ունենալու համար ներք-
նապէս. այն աստիճան որ ձախ ձեռքդ
պէտք չէ գիտնայ թէ ինչ կը գործէ աջդ:
Աստուածորդին իր վսեմ սկզբունքները կը
բացատրէր Ժողովրդեան շատ դիւրահաս-
կընալի առակներով, որ իրենց պարզու-
թեան մէջ ամենաբարձր գաղափարներու
ցոլացումն են: Այսպէս՝ Անառակին առա-
կը, ուր զղջացողին հանդէպ Հօր Աստու-
ծոյ անուն գթութիւնը կը խոստացուի,
Ճատեալին առակը, որ կը սորվեցնէ մեզի թէ
ի՞նչպէս կրնանք բարեկամներ պատրաս-
տել մեզի «ի մամոնայէ սնիրաւութեան»,
և ուրիշ գեղեցիկ առակներ, և վերջապէս
Դատաւորին առակը, որ անցեալ կիրա-

կիի ճաշու Աւետարանին առանցքը կը
կազմէր:

Պերճախօս քարոզիչներ և հմուտ գրիչ-
ներ, յաճախ առիթ ունեցած են հաւա-
տացեալներուն ընդարձակօրէն բացատրե-
լու այդ առակներուն հոգեւոր նշանակու-
թիւնը և վսեմ խրատները: Ես կ'ուզեմ
այսօր ծանրանալ Դատաւորի առակին
վրայ, տարբեր հայեցակէտէ մը դիտելով
զայն:

Անիրաւ Դատաւորին անարտոյթեան իւր-
բեւ հակադրութիւն աստուածային գթու-
թիւնը կը մատնանշուի հոն: Բայց ես կ'ու-
զեմ խօսիլ կամիի ուժին վրայ, յամառ յա-
րաւորութեանը վրայ անտէր անտերունջ այն
այրի կնոջ, որ իր այդ յատկութենէն
դուրս ոչինչ ունէր իր կողմը նպաստաւոր,
եթէ ոչ հաւատքը, հաստատ համոզումը՝
իր դատին բացարձակ արդարութեանը
վրայ: Եւ սակայն այդ երկուքը, յարատե-
ւութեան ոգին և իր պահանջին արդարու-
թեան գիտակցութիւնը, յաղթեցին ուրիշ
ամէն խոչընդոտի, և կինն հասաւ իր գե-
րագոյն նպատակին, յաջողեցաւ ձեռք բե-
րել արդար իրաւունքն իր ոսոխին դէմ:

Բայց ի՞նչ է կամքը, որ այդքան հրա-
շալի արդիւնք առաջ կը բերէ: Ամէն մարդ
կամք չունի միթէ, ամէն մարդ չ'ուզեր
հանգիստ ըլլալ, երջանիկ, ամէն տեսակ
անարդարութիւններէ զերծ, բնութեան և
մարդկութեան չնորհած և ստեղծած բոլոր
բարիքներովը լեցուն: Ո՞վ չուզեր ճոխ
կեանք վարել, ազատ ըլլալ խօսուածքին,
շարժուածքին և գործերուն մէջ, և ո՞վ
չուզեր... արքայութիւն երթալ: Բայց մի-
թէ ուզելը կը բաւէ, միթէ կամքը ինքնի-
րեն նշանակութիւն մը ունի՞ այդ բոլոր
բարիքները ձեռք բերելու համար: Ո՞վ
կրնայ պայքարիլ աննպաստ պայմաններու
կուտակումին դէմ որ մեզ կը շրջապատեն,
ո՞վ կրնայ պայքարիլ ճակատագրին դէմ,
անկարելիին դէմ:

Մտածելու եղանակ մ'է այս, ամէն ազ-
գերու մէջ ալ սովորական. բայց դժբախ-
տաբար շատ աւելի տարածուած ու խո-
րունկ արմատ ձգած է մեր հասարակու-
թեան մէջ, որ յաջորդական երկար դարե-

բու մէջ զրկուած ինքնուրոյն, հաստատուն կեանքի մը ընձեռած երաշխիքներէն, երկրի չորս կողմերէն փչող ամենաբուռն, աւերիչ խորշակներէն տարուբեր, արիւնի և արցունքի հեղեղներու մէջ խղճուած, կորսնցողցիք է կամքի ուժը, յարատեւութեան ոգին, զօրեղ նկարագիրը, որ անհատները դիւցադուններ կը դարձնէ, և տղերքը՝ յաղթական, տիրապետող ցեղեր։ Ու նորէն, Հայը, առաջին օրէն, շատ հուժկու նկարագրի մը տէրը պէտք է եղած ըլլայ որ այնքան տառապանքէ, արիւնհեղութիւններէ, համախուս մարտիրոսացումներէ ետքը, ամէն բան, — բայց անհ'ն յաւն — կորսնցնելէ վերջ, դարձեալ յամառաբար կրցած է փարած միայ գաղափարի մը, լաւ ևս գաղափարական Հաստատութեան մը, իբրեւ միակ խեղճ ազգային կեանքի ահաւոր նաւարկութեան, և այդ միակ խեղճ — Ազգային Եկեղեցին — կարող եղեր է պահպանել զինքը համայնաձիւն կորուստի սարսափէն։

Բայց, վերջապէս, ինչ է կամքը։

Ստուգիւ, չկայ բառ մը որ աւելի տարտամ նշանակութիւն մը ունենար։ Կամիլ կը կոչենք ընդհանրապէս այնպիսի իրողութիւններ, որ պարզ արդիւնքն են մեր կիրքերուն, մեր սովորութիւններուն, մեր պէտքերուն և մանաւանդ միջավայրի ազդեցութեան։ Շատ անգամ կամիլ կը կարծենք ինչ որ ուրիշէ մը եղած պարզ թելադրութիւն մըն է, ինչ որ տարիներէ ի վեր ստացուած վատ ունակութեան մը հետեւանքն է։ Դպրոցական աշակերտն որ չուզեր աշխատիլ, գինեմոլն որ կինու զաւակ երեսի վրայ ձգած ամէն իրիկուն դիտեալունը կ'անցընէ, վրայ տալով իր սուղջութիւնը՝ իր կեանքը՝ իր պատիւը, յամառ ծխողն որ նիֆոդիւնի նման սոսկալի թոյն մը կը կլլէ անդադրում, անոր ցաւալի ազդեցութեան ենթարկուելով յամառաբար բայց շարունակ, ասոնք ուժով նկարագրով օժտուած մարդեր չեն, և կամքը չէ որ կը մղէ գիտենք այդ վատ գործերուն։ Ասոնք գերիներ են պարզապէս հինէն ի վեր ստացուած տգեղ սովորոյթներու։ Նոյնպէս՝ Բրիտանիան որ ունկըն-

դիր կրծի սուրբ պապութիւններուն, կը զգայ թէ լաւագոյն ուղղութիւնը կեանքի մէջ, այդ պատուէրներու ուշադիր կատարումն է։ Բայց չընեն, ոչ թէ որովհետեւ չուզեր ընել, այլ որովհետեւ ստորակ հետեւողն եղած է իր անձնական հակամիտութիւններուն դէպի հաճոյքը, գէշ ընկերներու գձուձ թելադրանքին, և որ վերջապէս անկարող եղած է ընելու այն պղտիկ ճիգն որ անհրաժեշտ է զօրեղ կամքի կազմութեան և արտայայտութեան համար։

Այս մէկ քանի տողերը կ'առաջնորդեն մեզ սահմանելու կամքը, իրեր հոգեկան այնպիսի ուժ մը, որու արտայայտութիւնները մեզանից խորհրդածութեան և շուրջ համոզումի մը հետեւանք միայն կ'ըլլան։

Այդպիսի լուրջ խորհրդածութեամբ կազմուած հաստատ համոզում մը, զօրեղ կամք մը, չաղդուիր ու է արտաքին թելադրութիւնէ, չի վախար հիւսիսէն կամ հարաւէն փչող հովէն. ուղիղ կ'ընթանայ ան դէպ իր նպատակակէտը, անսայթաք, յամառ յարատեւութեամբ մը, չձանձրանալով, չընկրկելով ու է ձախողուածի առջեւ, և ընդհակառակն խորտակելով կամ մէկդի ընելով ճամբուն վրայ հանդպած աւանդներու տեսակ խոչընդոտները։

Արդ, որպէսզի մարդ կարենայ ունենալ կամ ձեռք բերել այդ ուժեղ կամքը, անհրաժեշտ են կարգ մը պայմաններ, որոնց ամէնէն գլխաւորն է պղտիկ հասակէն, տունին կամ դպրոցին մէջ, տղուն ներքնաւ ըլլալ այդ զգացումը, հասկցուցած ըլլալ անոր՝ թէ կեանքի մէջ յառաջանալու համար պէտք է որոշ նպատակ մը ունենալ և անոր ձգտիլ, չըլլալ թիթեռնիկ մը՝ ծաղիկէ ծաղիկ ոտտոտող, կամ հողմաղաց մը որ փչող հովին ուղղութեամբ կը դառնայ, կամ պարզ, անգիտակից խամաճիկ մը որ ուրիշներու հրամանին համեմատ շարժումներ կ'ընէ, և ընդհանրապէս ծաղիկի տպաւորութիւն մը յառաջ կը բերէ։ Հետեւապէս դատապարտելի են այն ծնողները, մանաւանդ այն ուսուցիչները, որ տղուն մէջ չեն արթնցընեն այդ հոգեկան ուժը, կորովը, անոր

գիտակցութիւնը, և տղան դաստիարակած ըլլալ կը կարծեն, կրաւորական էակ մը դարձնելով զայն, որուն ամէնէն գնահատելի յատկութիւնն ըլլայ կոյր հնազանդութիւն մը իր մեծերուն:

Բայց դպրոցէն դուրս, լաւ ևս դպրոցէն ետքը, մարդ կարող է շատ գեղեցիկ կարողութիւններ ձեռք բերել: Եւ կամքը՝ հոգեկան ամէնէն գեղեցիկ յատկութիւնն է զոր ձեռք ձգելու համար կ'արժէ մեծ գոհողութիւններ ընել:

Այդ գոհողութիւններուն մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ հրաժարիլը կարգ մը տրգեղ սովորութիւններէ, որ մեզ ջլատած են, որ մեզ կապած կաշկանդած են: Անգլիացի նշանաւոր հեղինակ մը, Սուիֆթ, իր Կիւլիվերի անընդունալի գործին մէջ, որ հայերէնի ալ թարգմանուած է, կը պատմէ թէ երբ Լիլիթութիւններու երկիրը գտնուէր, այդ երկրին բնակիչները, որ հազիւ վեց բութաչափ բարձր հասակ մը ունէին, օր մը՝ մինչ ինքը քունի մէջ էր՝ մազերը ամենամուրը թելերով տարին կապեցին գետինը գամուած բազմաթիւ մանրագիտական ցիցերու: Եւ անա Կիւլիվէր, անշարժութեան մատնուած, արամադրութեանը տակ կը մնար այն էակներուն ձեռքը, որոնցմէ չորս հինգ հատը կրնար իր գրպանը խօթել: Այսպէս են վատ սովորութիւնները, որ Կիւլիվէրը կաշկանդող հազար ու մէկ նուրբ, գրեթէ անտեսանելի թելերով անկարողութեան կը դատապարտեն մեր կամեցողութիւնը: Այդ սովորութիւններու կարգէն են մեր հազարումէկ պղտիկ տկարութիւնները, մեր մոլութիւնները, ծխամոլութիւնը, գինեմոլութիւնը, որոնց անխարկեցի քիչ մը վերը: Այդ սովորոյթներու կարգէն է նաեւ ուրիշին ըրածն ընդօրինակելու կապկութիւնը, որ մասնաւորապէս ծաւալած է մեր՝ Հայերու մէջ: Նշանաւոր երկրախոյզ մը կը պատմէ թէ Ֆիճի կղզիին բնակիչները, օր մը կ'ուղեկցէին իրենց ցեղապետին, որ շատ մը հետեւորդներով լեռան մը կողմնի վեր կը մագլցէր նեղ արահետէ մը: Յանկարծ ցեղապետը սխալ քայլ մ'առնելով ինկաւ իր բոլոր հետեւորդներն ալ անմիջապէս

անոր պէս ըրին. մէկ հոգի միայն ոտքի վրայ մնաց, բայց միւսները բոլորը մէկէն վրան յարձակեցան, ըսելով որ դուն մեր ցեղապետէն աւելի աղէկ բան մ'ընել կը կարծես:

Ֆիճի կղզիին այս միամիտ բնակիչներուն չե՞նք նմանիք քիչ մը մենք ամէնքս ալ, որ չունինք որոշ նպատակ մեր անհատական, բայց մանաւանդ ազգային կեանքին մէջ, և խամաճիկներ ենք պարզապէս՝ միջավայրի ազդեցութեանց ենթակայ, օրուան հոսանքին անձնատուր:

Եթէ, ուրեմն, կ'ուզենք բարձր բռնել մեր նկարագիրը, և ունենալ որոշ անհատականութիւն ու որոշ նպատակ, պէտք է ամէնէն առաջ ընտրել այդ նպատակն որուն պիտի հետապնդինք, ընտրել ատիկայ լուրջ, հասուն խորհրդածութենէ մը ետքը, և մեր հազարումէկ մտածումներուն մէջ ատիկա՝ ընել գերադաս, տշխատիլ մէկը՝ նետելու բոլոր մեր վատ ունակութիւնները, որոնց չարիքը պարտաւոր կ'ըլլանք կրելու մեր վրայ մինչեւ մեր կեանքին վերջը՝ ինչպէս խռնջայլը իր պատեանը:

Այդ վատ սովորութիւններէն ազատուին անկարելի չէ բնաւ, միայն թէ ճիշդ պէտք է, նաեւ հաւերտութիւն. այն համբերատարութիւնը որ ամէնէն հոյակապ արդիւնքներն յառաջ կը բերէ, համբերող բարկութեան դէմ, համբերատար՝ աշխատութեան մէջ, համբերատար ուսման և գիտութեան մէջ, համբերատար և համակերպող՝ վերջապէս անխուսափելին դէմ. բայց ո՛չ այնպիսի բաներուն հանդէպ որոնց դէմ կարելի է մաքառիլ. այսպէս՝ համբերել կարելի և յանձնարարելի ալ չէ հիւանդութեան, անիրաւութեան, բռնութեան դէմ:

Եւ համբերութեան հետ պէտք է լծորդուած ըլլայ յարասեւորութիւնը, անձանձիր, յամառ հետապնդումը, ճիգը՝ նոյն նպատակին հասնելու: Այդ գեղեցիկ յատկութիւնն է որ կարող ըրած է զօրեղ մտքերը՝ հուշակաւոր գիւտեր ընելու, մարդկութեան բարերարներն ընծայելու: Յարատեւողներ եղած են Նոր Աշխարհի միլիոնատէրները՝ ստուար մեծամասնութեամբ՝ ընդհանրապէս

ընկերային խոնարհ դասակարգերէ բարձրացած ամէնէն հոյակապ դիրքերու . յարատեւողներ՝ չքաւոր ընտանիքի զաւակներ, որ ուսման և գիտութեան ծարաւի, նետուած են քաղաքակիրթ աշխարհի լուսաւոր կեդրոնները, և համբերատար, յամառ, չարքաշ յարատեւութեամբ կրցած են համալսարաններու մուտքը բռնաբարել գրեթէ . և փառաւոր ընթացքներ բոլորելէ ետքը դառնալ իրենց երկիրը, քաղաքակիրթութեան լուսաշող ճառագայթները սփռելու հայրենիքի ամէնէն հեռաւոր, խաւար անկիւնները: Անոնք այդպիսի տոկուն նկարագրի տէր հոգիներ, — որոնցմէ մեր համայնքին մէջ ալ չատեր կան և որոնց անունները չպիտի ուզենք յիշել՝ անձնասիրութիւններ վիրաւորած չըլլալու համար, — շատ լաւ գիտեն յարատեւութեան հրաշալի արդիւնքները, գիտեն թէ շարունակ միեւնոյն կէտին վրայ վազող ջուրը ժայռեր կը ծակէ, թէ Սիւէզի ջրանցքը բրիչի յաջորդական հարուածներով փորուեցաւ, նոյնպէս՝ Եւրոպայի հսկայ փապուղիները, թէ գիւղացին աւիս առ աւիս կը հերկէ ընդարձակածաւալ դաշտերը, ու որմնագիրն աղիւսները մի առ մի քովէ քով ու վրայէ վրայ շարելով կը կառուցանէ հոյակապ շէնքեր, արքայական պալատներ:

Յարատեւութիւնն իրապէս հրաշալի արդիւնքներ յառաջ կը բերէ ամէն կարգի կառուածներու մէջ: Բայց այդ գեղեցիկ յատկութեան պէտք է ընկերանայ հոգեկան ուրիշ գեղեցիկ ձիրք մը, ֆայտփիւնը, առանց որու մարդ պիտի կասէր հանդպած առաջին խոչընդոտին առջեւ: Քաջութիւնը՝ յարուան դիմադրութիւնը կամ պոռոտախօսութիւնը չեն յաճախ անգոյ թշնամիներու կամ վտանգներու դէմ: Այլ գիտակցօրէն դիմելն է ուր որ վտանգ կայ, բայց ուր պաշտպանուելիք բարձրագոյն շահ մը կայ նաեւ, կամ վսեմ սկզբունք մը: Քաջութիւնն անհրաժեշտ է ինչպէս պատերազմի դաշտի վրայ, նոյնպէս անվորական կեանքի մէջ: Քաջ, արի հոգիներ են անվերջ նաւաստին, շոգեկառքի մեքենադորձը, հանքերու, գործարաններու և հսկայ շէնքերու բանուորները, որոնք ա-

մէն վայրկեան վտանգի ենթարկած կը գտնուին իրենց կեանքն ու հոգին, հացի պայքարը մղելու, ընտանիք ու զաւակ ապրեցնելու համար:

Ամբողջ թուումով մը՝ ահա ուրեմն գլխաւոր տարրերն այն գիտութեան որ կամփի դաստիարակութիւնը կը կազմէ: Այդ դաստիարակութիւնն անհրաժեշտ է ամէն մարդու անհատապէս, ապագայ պատուաւոր դիրք ապահովելու համար իրեն. անհրաժեշտ է մանաւանդ հայ ժողովուրդին հանրային կեանքին ու գործունէութեան համար: Ազգային կամքը, ազգային գործունէութիւնը պէտք է ունենայ իր որոշ նպատակը, և այդ նպատակին հասնելու համար որոշ ուղղութիւն մը, որուն բուցակայութիւնն է գլխաւոր պատճառը հանրային այն անկերպարան և յուզեալ վիճակին, որուն մէջ կը տապալակինք:

Վերջացնելու համար այն աւետարական առակով որով սկսանք, անհրաժեշտ է նկատել թէ հոգեւոր կեանքի մէջ ալ ամենաբարձր դեր մ'ունի կամքը՝ երջանկութեան հասնելու համար: Հոգեւոր կեանքի մէջ, — ինչպէս մարմնաւորին — ճիշտ է թէ գերագոյն կամք մը կայ, աստուածային կամք մը, որ ունի և պէտք է ունենայ իր հզօր, գերակշիռ դերը մարդկային փրկութեան համար: «Եղիցին կամք քո», պատուիրեր է մեզի Յիսուս: Բայց միեւնոյն աստուածային էտ'կը կը պատմէ մեզի այն սրտապնդող առակը, ուր անիրաւ դատաւորը տեղի կուտայ ամէնէն տկար արտօմի մը, սյրի կնոջ հաստատուն կամքին, յամառ յարատեւութեան առջեւ: Միեւնոյն Աստուածորդի'ն կը խոստանայ մեզի յայտնապէս. «Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտնիք, բաղինցէք և բացցի ձեզ»: Ո՛հ, հաստատուն, աննկուն կամքով ու վստահութեամբ բաղինք, ու լայնօրէն պիտի բացուին մեր առջեւ երկնաւոր արքայութեան, — և երկրաւորին ալ — դուռները:

ՋԱՐՄԱՅՐ ՔԱՅԱՆՍ

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն Հ Ա Յ Զ Ա Յ Ն Ա Գ Ր ՈՒ Թ Ե Ա Ն

(Շարունակութիւն Տրդ թիւին)

ԳԼՈՒԽ Բ.

Պետրոս Զեօմէլէֆեան. — Նէյզան Զեմոր. — Աբիսողոմ Իւրիւհեան. — Ալեքսան Թամպուրի. — Յովհաննէս Միւսէմտիսեան. — Աբիստուկէս Յովհաննէսեան. — Պապա Համբարձում առեւտրական գործոց կը ձեռնարկէ. — Իր վերջին օրերը:

Թուականի կարգով ամենէն առաջ կու գայ Պապա Համբարձումի աշակերտներէն Պետրոս Զեօմէլէֆեան, որ ջերմ հետեւողն ու հաւատարիմ աւանդապահն եղաւ իր վարպետին, ըստ վկայութեան Հ. Նզուարդ Հիւրմուշի. թէեւ Եղիա Տնտեսեան ասոր հակառակը կը պնդէ: Սա ծնաւ 1785ին Սկիւտար. իր հայրը որ Եւդոկիայէն Պոլիս գաղթած ըլլալով Սկիւտարի Եէշիլ-թուլումպա փողոցը հաստատուած էր՝ Գրիգոր կը կոչուէր և արհեստով բրուտ էր:

Պետրոս իր հօր նման եկեղեցաւէր ըլլալով, միշտ կ'երթնէր Ս. Խաչ եկեղեցին, և ի մանկութենէ անտի մեծ հակում ցոյց կուտար երաժշտութեան, բուն փափաք մը զգալով Շարականներու հոգեմայլ եղանակները ժամ առաջ սովորու: Գապասաքալեանի նորատիպ երկասիրութիւնը (Նուազարան) ձեռքն առած, կը ջանար յազուրդ տալ իր ջերմ բաղձանքներուն, ուզելով գտնել անոնց մէջ՝ թէ կարո՞ղ է այդ խաղերուն միջոցաւ արդիւնք մը քաղել:

Այն ատենի սովորութեան համեմատ՝ երբ 12 տարեկան եղաւ Պետրոս, ծնողքը աշակերտութեան դրին զինքը դերձակի մը (*) քով: Պետրոսի կրպակը խիստ մօտ ըլ-

(*) Կ'երեւայ ք ժ. Դարու սկիզբները մեծ կարեւորութիւն ունեցած էր դերձակութեան արհեստը (ինչպէս հիմա ոսկերչութիւնը). ըստ որում բոլոր տղայք իրենց պատանեկան հասակին մէջ դերձակի իմ աշակերտութեան կը դրուէին, ինչպէս որ Պապա Համբարձումի ծնողքն ալ այդ սովորութեան հետեւած էին:

լալով Լիմոնճեանի խանութին, յաճախակի կ'այցելէր անոր, և երկուքն ալ միեւնոյն փափաքով տոգորեալ, շատ անգամներ իրենց գործը բոլորովին մոռցած՝ կը սկսէին եկեղեցական երգեցողութեամբ ժամանակ անցընել, որուն պատճառաւ կծու յանդիմանութիւններ կը լսէին մերթ ընդ մերթ իրենց վարպետներէն, թէև Համբարձում տարիքով բաւական մեծ էր: Օր մը Պետրոսի վարպետը ստիպողական գործի մը համար զինքը տեղ մը կը զրկէ, բայց տեսնելով որ կ'ուշանայ՝ ուղղակի կ'երթայ Համբարձումի խանութը և կը տեսնէ իր աշակերտը՝ որ բերանաբաց մտիկ կ'ընէր Լիմոնճեանի տուած դասերը. դերձակը սոյն տեսարանին առջեւ ա'լ չկրնալով ինքզինքը զսպել՝ ուժգին ապտակ մը կ'իջեցնէ Պետրոսի երեսի պօռալով. «Ծօ չո'ւն, դուն թերզի՞ ես մի, խանէնտէ՛ ես մի»: Զեօմէլէֆեան զգալով իր յանցանքը, խոնարհութեամբ ոտքի կ'ելլէ և վարպետին կը հետեւի՝ առանց բառ մը հանելու բերնէն:

Այս անսխալ միջադէպը պատճառ եղաւ որ բոլորովին թողու դերձակութիւնը, ուստի քանի մը տարի շուրջակահարութեան հետեւելէ վերջը՝ տեսնելով որ բաւական վարժուած էր այդ արհեստին, Զինճիրի խանի մէջ սենեակ մը վարձելով սկսաւ շուրթակի հետ քաղաքական երաժշտութեան դաս տալ, որուն քիչ շատ հմտացած էր Համբարձումի շնորհիւ: Պետրոս երկար տարիներ այս գործով զբաղեցաւ, բայց յետոյ տեսնելով որ դժուար կ'ըլլայ իրեն ամէն օր Սկիւտարէն Պոլիս իջնել, (քանի որ դեռ չոգենաւի երթեւեկութիւնն հաստատուած չէր), ստիպուեցաւ քիչ մը ատեն ալ իր տան մէջ դասախօսել:

Այն ատեններն Սկիւտարի Եէշի Մա-հալլէ թաղը բաւական ազդեցիկ ամիրաներ հաստատած էին իրենց բնակութիւնը, որոնք լսելով Զեօմէլէֆեանի համաւար, թախանձեցին զինքը՝ յանձն առնել Ս. Կարապետ եկեղեցւոյ երաժշտութեան դասատուի պաշտօնը: Սիրայօժուր ընդունեց Պետրոս անոնց առաջարկը, և քանի մը տարի շարունակեց հայկական ձայնագրութեամբ իր վարպետէն ուսած նոր հրահանգներով ա-

չակերտներ հասցընել, միեւնոյն ժամանակ քաղաքական երաժշտութիւնն ալ սորվեցնելով փափաքողաց՝ «ուսուլ»ի միջոցաւ և ձեռաց բաղխումով, զորս «տիւմ, թէք» կ'անուանէր. (Կենսագրութիւն Հայ երաժշտաց, Յովհաննէս Շալճեան) :

Կարապետ Պատրիարք (*) շատ համակիր չէր նոր ծաղկիլ սկսած Համբարձումեան ձայնագրութեան. նա՛ մանաւանդ երբ կը տեսնէր եկեղեցւոյ մէջ դպիր տղայոց երգելը տետրակ ի ձեռին, ակներեւ նշաններով իր սրտեղութիւնը կը յայտնէր՝ զանոնք երկասիրողին ու դասախօսին հասցէին յանդիմանութիւններ տեղացնելով : Չէ՞մէկէն տեսնելով որ իր աշխատութիւնները փոխանակ գնահատուելու ընդհակառակն խստիւ կը քննադատուին, ձանձրացաւ պաշտօնավարութենէն և առթի մը կը սպասէր՝ բոլորովին հրաժարելու համար :

Նոյն միջոցներուն (1831) Հռովմէադաւան ազգայինք բաժնուելով Հայ. Եկեղեցիէն, յաջողեցան ուրոյն Պատրիարքութիւն մը հաստատել կայսերական Պէրաթով, և Վիեննայի Միթրարեան միաբաններէն Մանուէլ վարդապետ Յակոբեանը Պատրիարք ընտրեցին իրենց : Միւս կողմանէ աւարտած էր նաեւ ի Ղալաթիա՝ Յիսուս Փրկիչ անուամբ Պապական Հայոց եկեղեցւոյն շինութիւնը, որով երաժիշտ դասատուի մը պէտքն զգալի եղած էր իրենց. ուստի 500 դրշ. ամսաթոշակով նոյն եկեղեցւոյ երաժշտութեան պաշտօնը առաւ Ջարկեցին Չէ՞մէկէնանի :

Պետրոս՝ որ արդէն զգուած էր իր ազգակիցներուն կողմանէ տեսած անիրաւ հակառակութիւններէն, հոգեւին փարեցաւ այդ նոր պաշտօնին, և իր անձին նկատմամբ եղած մեծամեծ յարգանքները տեսնելով՝ Հռովմէադաւանութիւնն ընդունեց, որուն մէջ միտաւ 1840ին՝ ու թաղուեցաւ Սկիւտարի գերեզմանատան մէջ :

Երկու զաւակներ թողուցած է սա՛ Անդրանիկ և Ստեփան, որոց առաջինը իւր

(*) Սա իր Պատրիարքութենէն հրաժարելի յետոյ Սկիւստ մեկուսացած կեանք մը կը վարէր մինչև իր վերջին օրերը, սեպ ալցելով թաղին երկու եկեղեցիներէն ալ :

հօր նման՝ ջութակահարութեան հետեւեցաւ, իսկ երկրորդը դեռ քանի մը տարի առաջ դեղագործութեամբ կ'զբաղէր Սէլամիէ թաղին մէջ : Սոքա իրենց հօրը մահուանէն յետոյ մայրենի եկեղեցւոյ գիրկը վերադարձան : Ստեփան Չէ՞մէկէնեան մինչեւ վերջ պահած էր իւր հօրը գործածած ջութակը՝ որ 100 տարուան հնութիւն մը ունէր :

Նէյզան Զենոբ (ինչպէս ըսած ենք) Լիմոնճեան Պապա Համբարձումի չորրորդ դաւակն էր՝ որ ծնաւ 1810ին : Սա տղայ հասակէն ջերմ փափաք մ'ունենալով սրինգ փչելու, սկսաւ դաս առնել իր մեծ եղբոր մէջ՝ Յովհաննէսէն, ինչպէս նաեւ ձայնագրութիւնն ալ հօրմէն : Զենոբ քիչ ատենի մէջ այնքան առաջ տարաւ սրնգահարութիւնը, որ իր բացակայութեան միջոցին Յովհաննէս օր մը ջարդուփշուր կ'ընէ եղբորը գործածած սրինգը, նախանձելով աւարտ յաջողակութենէն : Զենոբ տուն վերադառնալով երբ կը տեսնէ իր մեծ եղբորն ըրածը՝ զայրացմամբ կ'ըսէ անոր. «Ողորդ իմ կոտորեցիր նէ՛՝ զէնէհաթս ալ չկրցար ծառքէս առնել ես՛» :

Զենոբ՝ որ դէմքով, հասակով և ընդթեամբ շատ կը նմանէր իր հօրը, յաճախակի կ'ընկերանար անոր՝ Թէքէները այցելած ատեն, լսելու համար համբաւաւոր տէրվիչներուն սրինգով նուագած նախերգանքներն (կէզինթի) ու բիշրէվները, որով հետզհետէ կը կատարեալագործէր այդ արհեստին մէջ ունեցած կարողութիւնը. ա՛լ իրեն մասնագիտութիւն ըրած էր այդ գործիքը, և ո՛չ միայն լաւ կերպով կը փչէր նէյը՝ այլ և կը շինէր զայն և սուղ գիներով կը վաճառէր Թէքէներու մէջ գըտնուող դեռատի ուսանողաց :

Իր ունեցած այս համբաւին շնորհիւ չա՛տ անգամ տօնական օրերու միջոցին կը հրաւիրուէր ամիրաններէն, որպէս զի Ս. Պատարագի արարողութեանց ժամանակ սրինգով մասնակցի դպիր տղայոց երգած եղանակներուն : Օր մ'ալ երբ Կարապետ Պատրիարք Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ կը պատարագէր, թաղեցոյ խնդրանք Նէյզան Զենոբ վերստին հրաւիր-

ուած ըլլալով՝ հաղիւ թէ սկսած էր սրինգ անել, Պատարագիչ Սրբազանը բարկութեամբ հրամայեց որ լուսնին զայն, առարկելով որ այդ տեսակ զբօսանքներ աւելի՛ սրճարաններու կը պատշաճին քան թէ սրբավայրերու։ Այնուհետեւ վերջացաւ եկեղեցեաց մէջ սրինգով դիմ թռնելու սովորութիւնը, վասն զի Կարապետ պատրիարք խիստ հակառակ էր եկեղեցական տրարողութեանց մէջ ո՛ր և է օտար ձեւակերպութիւն մտցնելու։

Վերոյիշեալ դէպքին պատճառաւ Ձենոբ բոլորովին հեռացաւ եկեղեցիէն, և մի՛ միայն քաղաքական երաժշտութիւնը մշակելու հոռեւ ըլլալով՝ արհեստին մէջ այնքան յառաջ գնաց, որ օր մը երջանկայիշատակ Սուլթան Մէճիտ արքայ իմանալով Նէյզան Ձենոբի՝ սրինգ անելու մէջ ունեցած ճարտարութեան համբաւը, կը հրամայէ իւր ներկայութեան կոչել զինքը։ Ձենոբ չուզելով իր տգեղ դէմքը ցոյց տալ Նորին Վեհափառութեան, կ'աղաչէր որ Մապէնի դահլիճէն նուագէ։ Ընդունուելով իր խնդիրքը՝ կ'սկսի նուագել նշանաւոր հեղինակներու ընտրեալ գոյն հատուածները, որոնց վրայ զմայլելով մեծագորարքան՝ հրաման կ'ընէ որ այդ նուագածուն իրեն ներկայացնեն։ Սկսեկապետ փաշան՝ որ գիտէր Նէյզանի երեւան չ'եղլելուն պատճառը, խոնարհելով կ'ըսէ. «Վեհափառ Տէր, միայն իւր սրինքը մտիկ ըրէք, բայց երեսը մի՛ նայիք»։

Նէյզան Ձենոբ գրեթէ 45 տարեկան էր երբ ամուսնացաւ Արդուինցի Մարիամ առնուն աղջկան մը հետ, որմէ միակ արուգաւակ մը ունեցաւ, և ուզելով իր մեծառնուն հօրը յիշատակն անմահացնել, Համբարձում անուանեց զայն։ Ձենոբ այն աստիճան յարեցաւ նորածին մանկան որ գրեթէ իր բոլոր գործերն երեսի վրայ թողած երէք էր ուզեր տունէն դուրս ելլել, յառաջացեալ տարիքին մէջ ունեցած այս Բենիամինին ուրախութիւն պատճառելու և անոր հաճոյքը տեսնելով ինքն ևս ուրախանալու համար։ Ինը տարեկան եղած էր այս որդին, երբ օր մը Եէնիմահալլէի բարձանց վրայ Ֆրրըլտաք պաղչէսի ըսուած

պարտէզը սրինգ կ'ածէր Ձենոբ, գոհացում տալու համար իր բազմաթիւ ունկնդիրներուն՝ որոնք խուռն բազմութեամբ կը շրջապատէին զինքը, ո՛ւր որ ալ գացած ըլլար։ Նոյն միջոցին իրենց տան սպասուհին ալ պառոյտի հանած էր պղտիկ Համբարձումը, որոյ վրայ հակելու պաշտօնով մտած էր Նէյզանի ծառայութեան մէջ, բայց որովհետեւ անպարկեշտ աղջիկ մ'էր, փոխանակ իրեն յանձնուած տղուն հոգ տանելու, կ'սկսի հոն գտնուող երիտասարդաց հետ խօսիլ խնդալ։ Համբարձում ազատ զգալով ինքզինքն սպասուհւոյն հակողութենէն, Բազար պաշիէն անմիջապէս նաւամատոյց կ'իջնէ և հոն կապած մակոյկի մը մէջ ցատկելով՝ կ'սկսի օրօրուիլ ոտքերը դուրս կախած։ Բայց դժբախտաբար իր հաւասարու կըշուութիւնը կորսնցնելով խեղճ տղեկը ծովը կ'իյնայ և ջրամոյն կը լինի՝ առանց մէկէ մը նշմարուելու։

Այս ցաւալի պատահարն ամենամեծ հարուած մ'եղաւ Նէյզան Ձենոբի, որ դեռատի զաւկին վաղահաս մահուան վրայ կարեւոր խոյրած՝ չուզեց այլեւս Պօլսոյ մէջ մնալ, ուստի հետեւեալ օրն իսկ Եգիպտոս մեկնեցաւ՝ վերջին օրերն հոն անցընելու համար։

Մէկ քանի ամիս վերջը հաղիւ կրցան համոզել զինքը՝ որ նորէն ձեռք տունէ նախկին արհեստը, որով սկսաւ Գոհրիէի մէջ ալ տարածուիլ իր ճարտարութեան համբաւը։ Խալիլ իմանալով որ Նէյզան Ձենոբ վեհ. Սուլթանին ներկայութեանը նուագած է, ինքն ալ փափաքեցաւ լսել զայն։ Ձենոբ չկրցաւ գիմադրել այս հրամանին, ուստի փութաց ներկայանալ Սայիտ փաշայի և յազուրդ տալ նորա բաղձանաց։ Այնքան գո՛հ եղաւ Բարձր. Խալիլը՝ որ այլեւս չուզեց հեռացնել իրմէ զՆէյզան Ձենոբ, և անոր բնակութիւն տուաւ իր պալատին մէջ, յաճախակի լսելու համար զինքը։ Օր մը նշմարելով որ նուագած ատեն կ'արտասուէ, հարցուց այս տրտմութեան պատճառը։ Ձենոբ հարկադրուեցաւ պատմել իր անցեալը և միակ զաւկին աղետալի վախճանը, ցաւելով միանգամայն որ ինքն ալ իր եղբարց պէս ամուրի չէր մնացած։

Բիշ ատեն ապրեցաւ Զենոր, վասն զի ամէն ժամ աչքին առջեւ կը ներկայանար ջրամոյն եղած որդւոյն անշնչացած դիակը՝ որով անտանելի եղաւ իր կեանքը, և եգիպտոս ուղեւորելէ յետոյ հազիւ կրցաւ երեք տարի ապրիլ Փարաւոններու երկրին մէջ, ուր մեռաւ 1866ին: Կ'ըսեն թէ իր արհեստակիցները նախանձելով որ Հայ մը այս աստիճան սիրելի ըլլայ իրտիվին, թու- նաւորեցին զինքը:

Նէյդան Զենորի մահուամբ վերջացաւ նաեւ Լիմօնճեան Պապա Համբարձումի գեր- դաստանը, որոյ վերջին արու շառաւիղն էր ինքը: Սորա աշակերտներէն մին եղած է նաեւ փերեզակ Պօղոս (Ժողովրդական բանաստեղծ Միհրան Յովհաննէսեանի հայ- րը), զոր քանիցս լսելու առիթն ունեցած ենք մեր տղայութեան ատեն, երբ սրինգ անելով կ'ընկերանար մեր երգեցողու- թեանց:

Արիստղոմ Իւթիւճեան ծնած է 1818ին 'ի Գում Գաբու, Հալուզու Բիլիսէ փո- ղոցը: Սորա հայրը կը կոչուէր Իւթիւճի Ղազարոս, որ իրմէ զատ ունեցած է նաեւ երկու զաւակներ՝ Սիմոն և Ստեփան (ար- տնատեր «Բիւրակն» ի): Մանուկ հասակէն Մայր վարժարանը դրուեցաւ սա, ուր ա- շակերտեցաւ Փէշտիմալճեան Գրիգոր պատ- ուելիին՝ ըստ բաւականի սորվելով Բերա- կանութիւնն ու Տրամաբանութիւնը:

Արիստղոմ՝ ինչպէս դէմքի՝ նոյնպէս ձայնի գեղեցկութեամբ օժտուած ըլլալով, բոլոր ժողովուրդն զմայլմամբ կ'ունկնդրէր նորա երգեցողութեանց Մայր եկեղեցւոյ մէջ, ուր դպրութիւն կ'ընէր նա՝ մեծ յատ- կութիւն և բնական ձիրք ունենալով:

Ամիրաներն այնքան յափշտակուած էին սորա յուզիչ ձայնէն, որ իր երկու ըն- կերակցաց հետ (Ալիքսան և Արիստակէս) 250 զրջ. ամսականաւ աշակերտութեան դրին Հալուզու քիլիսէի երաժշտապետն եղող Փապթիին քով, որմէ ուսան այս երեքը Յունական երաժշտութիւնը:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԶԵՑ. ՀԻՍԱՐԼԵԱՆ

(Շարունակելի)

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԱՓՐԻԿԷԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ

Քրիստոնէութիւնն և երոպական բաղա- քակրթութիւնը սեւամորթներու մէջ

Ոչ շատ հեռաւոր ժամանակներու մէջ, 30 տարի առաջ, հարաւ արեւմտեան Աֆ- րիկէն որ կը կոչուի Ստրուկներու Աֆ, անթափանցելի անտառ էր և անմարդա- քնակ անապատ: Ոչ մէկ տեղ ճամբայ չկար և հազուադէպ կարաւանները կ'երթեւեկէին անյարմար շաւիղներով: Բնիկներն երկրա- գործութեամբ գրեթէ չէին զբաղեր: Սե- ւամորթ ցեղերու մէջ կատարելապէս կը թագաւորէին անապաշտութիւնն ու ան- կըրթութիւնը: Բնակիչները մեծ մասամբ կեդրոնացած էին մեծ գիւղերու մէջ, ըն- դարձակ սարածութիւններ անմարդաքնակ թողլով: 1865 թուականին առաջին ան- զամ այնտեղ երեւացին եւրոպական միսիո- նարներ (քարոզիչներ), իսկ քսան տարի վերջը արդէն վայրենի ցեղերը կերպարա- նափոխուած էին: Կուսական անտառները կիսով չափ կտրուէր էին, ամէն տեղ շին- ուած էին երկաթուղիներ և խճուղիներ, Վաճառականութիւնն ու եւրոպական քա- ղաքակրթութիւնը՝ ամէն տեսակ դաւանու- թիւններու քարոզիչներու հետ՝ փոխեցին տեղացիներու կեանքի պայմանները. մինչև անգամ երկրին «Ստրուկներու Աֆ» կոչու- մը այլևս չէր յիշուեր:

Խօսելով սեւամորթներու մէջ քաղա- քակրթութեան ներմուծման մասին, պէտք է ըսել որ անոր առաջին քայլերը շատ փշալից էին: Շատ նեղութիւններ կրե- ցին, մինչև որ սորվեցուցին սեւամորթ- ներուն՝ իրենց ջանքը ի գործ դնել այնպիսի բաներու վրայ, որպիսի են խճուղիներ յառակել կարծրաքարով, հեռագրի և ե- լեքտրական լապտերներու սիւներ տնկել: Բայց այսու ամենայնիւ եւրոպացիները կըր- ցան ալգել վայրենիներու վրայ, և վեր- ջիններս սկսած են յարաբերութեան մէջ մտնել եւրոպացիներու հետ: Անոնց մէկ քանի գետերուն և լիճերուն վրայ շինուած են շոգենաւեր, ափերուն վրայ կը գրտ-

նուիրն առեւտրական կայաններ, բազմաթիւ զանազան տեսակ նաւեր կը փոխադրեն տեղական ապրանքներ, որոնք ծովով կը ղրկուին Եւրոպա: Նաւամատոյցներն և նաւահանգիստները դարձան աւելի մարդաբնակ: Բնիկներու զարգացումը շատ կը նպաստէ այնտեղ աշխարհիկ և միսիոնարական դպրոցներ բանալուն: Եւրոպական քաղաքակրթութեան բարերար ազդեցութեանը պէտք է վերագրել, որ բնիկները թողին մարդազոհի և մանկապանութեան սովորութիւնները, կ'անհետանան ճակատագրի պաշտամունքները, գողութեան համար ձեռքը կտրելու պատիժը բաւական մեղմացած է:

Քրիստոնէութեան ազդեցութեան շնորհիւ կը թուանայ և կ'իյնայ կախարդներու և վհուկներու իշխանութիւնը: Լ'նդահանրապէս Քրիստոնէութեան բարոյական սկզբունքները մեղմացուցած են բարքերը. բայց միսիոնարներու ջանքերն արգելքի կը հանդիպին ոչ միայն սեւամորթներու, այլ և մահմետականութեան կողմէն, որ տարածուած է Ափրիկէի հիւսիսային կողմը և կը թափանցէ անոր ներքը:

Ուշադրութեան արժանի է որ եւրոպացի կրօնաւորուհիներու օրինակը կ'ունենայ հետեւողներ. այսպէս, Ափրիկէի կեդրոնը՝ Դանկանիքա լճին մօտերը՝ կազմուած է տեղացի սեւամորթ Քոյրերու ընկերութիւն: Այդ Քոյրերը երախտագիտութեամբ կը վերաբերուին դէպի իրենց եւրոպացի դաստիարակները, և կ'աշխատին անոնց նմանիլ: Սեւամորթ Քոյրերու անկեղծ հաւատքն և եռանդը կը հարկադրեն միսիոնարները՝ զանազան դէպքերու մէջ դիմել անոնց, և անոնք չեն հրաժարիր քարոզութեամբ պարսպիլ տեղացի կանանց մէջ, որոնց սովորութիւններն ու բարքերը իրենց լաւ ծանօթ են:

Եւրոպացի Քոյրերը միսիոնարի պարտք կը կատարեն, բացի յիշատակեալ տեղերէն նաև Զամպէզիի վերին մասերուն մէջ:

Այսպէս միսիոնարներու գործունէութիւնն ընդհանրապէս և քրիստոնեայ կիներունը՝ ի մասնաւորի՝ նպաստելով անա-

մորթներու արտաքին կացութեան բարւոքման, բարձրացուցին նաև անոնց ներքին, հոգեկան վիճակը:

* *

ԱՆԳԼԻՔԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Անկլիքան եկեղեցին այժմ զբաղած է երկու խնդրով:

1. Աթանասեան (Նիկիոյ) Հանգանակի պաշտպանութեամբ:

2. Արեւելեան Օրթոտոքս և Ռուս եկեղեցիներուն հետ միութիւն հաստատելու խնդրով:

Ոմանք կը ձգտին Աթանասեան Հանգանակը ժամերգութեան կարգէն հանել, առարկելով թէ սա սկիզբը և վերջը կը հռչակէ որ անոր մէջ բովանդակուած ընդհանրական (կաթողիկէ) հաւատքը անհրաժեշտ է փրկութեան համար: Թիւրիմացութիւնները հերքելու համար կատարուած է նոր թարգմանութիւն լատինական բնագրէն, որ և պատճառ եղած է հանգանակը պաշտպանողներուն նայեմքերի 4ին (Ն. Տ.) Քէյմպրիճի մէջ յատուկ ժողով կազմել, ուր միաձայն վկայուած է որ Հանգանակը անհրաժեշտ է իբրեւ հաւատոյ գիտելիքները բովանդակող վաւերագիր մը, որ Ե. դարէն ի վեր գոյութիւն ունի:

Նոյեմբեր 17ին (Ն. Տ.) նոյնպիսի ժողով մը կազմուեցաւ Լոնտոնի մէջ, ուր առաջին ճառախօս Լորտ Հալլիֆաքս պաշտպանեց հետեւեալ կէտերը. —

Եկեղեցիին պարտքն է՝ 1. Ցոյց տալ ճշմարտութիւնը. 2. Մարդու համար կաթողիկէ հաւատքի անհրաժեշտութիւնն ու պէտքը, և հաւատքէն հեռանալուն վրտանգը: 3. Մասնաւոր եկեղեցիներ իրաւունք չունին դաշելու այն բանին, որ Եկեղեցիի լրութեան մէջ հեղինակութիւն է:

* * Հոկտեմբեր 20ին (Ն. Տ.) Լոնտոնի Սիօն գօլէմին մէջ տեղի ունեցաւ Անգլիքան և Ռուս եկեղեցիներու միութեան տարեկան Յրդ ժողովը: Նախապէս Ս. Ալպան եկեղեցիին մէջ հանդիսաւոր պատարագ է մատուցուած: Ժողովին նախագահեց Ս. Ալպան եկեղեցիի փոխանորդը, բաղմամբիւ ճառեր արտասանուեցան: Ու-

բողոքեցաւ որ անգլիական գաղթավայրերու մէջ գտնուած բոլոր Օրթոտոքսներու հոգեւոր պէտքերն հոգալու համար պէտք է պատրաստել նոյն դաւանութեան հոգեւորականներ, հնարաւորութիւն տալով ասոնցմէ մէկ քանիին, անգլիական համալսարանի դասընթացքը անցընել Լոնտոնի գոլէճին մէջ, և ուղարկել գաղթավայրերը. նաև ուսանողներու ծախքը մօտ 400 սղերլին ոսկի՝ 3-4 տարուան համար տալ ամէն մէկին յատուկ կազմուած Խորհրդի ձեռքով:

Այս ծրագրին մասին հաւանութիւն տրուած են արդէն Կ. Պոլսոյ Յունաց «տիեզերական» Պատրիարքը և Գործուի և Աթէնքի արքեպիսկոպոսները:

* *

ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Ռուսիոյ Ներքին Գործոց նախարարութեան հաւաքած տեղեկութիւններէն հասկըցուած է որ 1909 տարւոյ մէջ Ռուսական Եկեղեցիէն անջատուեր և յարեր են՝

Կաթոլիկութեան	295000 հոգի
Բողոքականութեան	14500 »
Մանստականութեան	50000 »
Պուտոլայականութեան	3400 »
Հրէութեան	400 »
Կուսակալութեան	150 »

Ռուսական Եկեղեցիէն այս անջատումն սկսած է, Կ'ըսեն ուսու թերթերը, 1905 ապրիլ 17էն ի վեր, երբ հրատարակուեցաւ դաւանութեանց ազատութիւնը:

* * Յունվար 25ին Թիֆլիզ ժամաներ է Վրաստանի Եկզարք Խննդկենտրոս Արք., և փառաւոր ընդունելութիւն է գտեր: Մշակ կը գրէ թէ Խննդկենտրոս Արքեպ. Վրաց Սիօն Մայր Եկեղեցիին մէջ խօսած քարոզով յայտարարած է որ Կովկասի բոլոր ազգութիւններն հաւասար են իր առջեւ, և ինքը եկած է խաղաղութեան և սիրոյ պատգամներով, հաշտութեան ձիթեհի ձիւղը ձեռքը, և իր բոլոր ջանքը պիտի նուիրէ հանգստութիւն մտցնելու Վրաստանի ալեկոծուած կեանքին մէջ, և ջակցութեամբ հոգեւորական դասին Թիֆլիզի Հայ առաջնորդարանին կողմէն Ս.

Եկզարքին գալուստը շնորհաւորեր է Կոնստանտնուպոլիս նախանշամ Տ. Եփրեմ Վ., երկու աւագ քահանաներու ընկերակցութեամբ: Եկզարքն իր առաջին պաշտօնական այցելութեան ժամանակ, այցելած է նաև Հայոց առաջնորդին և Մանստականներու Միւֆթիին:

* * Սլաւ Եկեղեցական կեանքի մէջ նշանաւոր դէպք է Բեղերսպուրկի հոգեւոր ձեմարանի հարկւրամիակը, որ տօնուեցաւ անցեալ դեկտ. 17ին: Նոյն ձեմարանը, իր հարկւրամիայ գործունէութեան մէջ տուած է բազմաթիւ բարձրաստիճան հոգեւորականներ, քահանաներ, գիտնականներ, հասարակական գործիչներ: Սակայն ուսու պահպանողական լրագրերը շատ ալ գոհ են ձեմարանով: Ասոնք, քննելով ձեմարանը, կ'եզրակացնեն թէ ձեմարանի սաները, ոչ այնքան նուիրուած են Եկեղեցւոյ փառքին ու պայծառութեան, որքան իրենց անձնական շահերուն, ձգտելով միայն արդիւնաւոր պաշտօններու և բարձր աստիճաններու տիրանալ:

(Արարմս)

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՍ ԱՆՈՒՐՋՔԻՆ ՄԷՋ

Խորհուրդներուս անուրջին մեջ
Երբ մեռաի մը կ'առնեի,
Հոգիս ընդոս՝ դողսց անկերջ
Երկիւղանքէն Անդեհի:

Հոն գոյն չունէր Կապոյսն անհուն,
Եւ անէն գոյն կապոյս էր,
Մինչ երազներու՝ ո՛հ, Տճոյն,
Ձի Կապոյսն ինձ չէր ծայսեր:

Վարդի կարմիրը անուշակ
Ըղձակներուս գոյնն էր հոն,
Որ կը մարէր ջերմ շունչին տակ
Լոյսի անճառ շողերուն:

Ու շուանի անհասկն՝ անդեհ՝
Ձիւն փոփուր յոյզերուս՝
Կ'անգայսանաւ արագօրէն
Տրսնաբախիծ ու անդոյս:

Հոգեպարոյր գոյնն ալ, ըսի՞,
Մանիշակի փափկատուն,
Մութ ճառագայթն եր յոյսի
Մրիս քափուն ծաղկեռուն:

Եւ դեռ որքան ուրիշ գոյներ,
Ռհ, ի՛նչ շողեր հրաքուն
Մրիս խորհեն քունն դեպ ի վեր
Ձերդ հրթիռներ անկայուն:

Այսպէս՝ գոյներն այդ քաղնագան,
Հայեցիներն՝ հոգւոյս ջիւն՝
Հոն Կապոյտին մեջ յաճուեցան
Իբր պատրաստ փն, ոչինչ:

Եւ Կապոյտին համասարած
Համաստիսո յոյսն ու արեւ,
Օհ, նա Ինքն եր, Բարին Աստուած,
Որ կը փայլէր մեր վերեւ:

*

Ու հե՛հ հոգիս զողւո՛ց անվերջ
Երկիւղանքն Անդենի,
Խորհուրդներու անուրջին մեջ
Երբ մտաի մը կ'առնէի:

Եւզովիս **ԱՐՏԱԻԱԶԴ ՎԵՂ.**

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱՇԽԱՐՀԱՐԱՐԸ ԷՋՄԻԱՇՆԻ ՄԷՋ

Ս. Էջմիածնի պաշտօնաթերթին՝ Արաւսի Յուն վարի թիւին մէջ ուրախութեամբ կարդացինք Ն. Ս. Օծուծին Վեհ. Տ. Տ. Մատթէոս Բ. Սրբազնակատար կաթողիկոսի հայրապետական կոնդակը, որով՝ ի նկատ առնելով որ գրաբար լեզուին անգիտակ են եկեղեցական պաշտօնականներէ շատեր՝ քահանաներ, եկեղեցւոյ երեցփոխաններ, վարիչներ, հոգաբարձուներ, և հայրապետական հոգեւոր պաշտօնէութեանց կողմէ անոնց հետ գրաբար լեզուով կատարուած թղթակցութիւններ են. յաճախ անըմբռնելի և անիմանալի կ'ըլլան ստորին պաշտօնականներու և կամ սխալ հասկացողութիւններու առիթ կը տրուի, և եղած կարգադրութիւններ կը մնան թերի կամ ի՛նչ յապաղին, կը հրամայէ որ այսուհետեւ

թէ, հոգեւոր և վարժարանի վարչութեանց կողմէ առ Սինօղն, և Սինօղին կողմէ նոյն հաստատութեանց հետ կատարուելիք թղթակցութիւններն ըլլան աշխարհաբար լեզուով: Շատ կարեւոր, յառաջդիմական քայլ մ'է այս՝ վարչական գործերու բարւոք մատակարարութեան, և ժողովրդային պէտքերու արագ հոգացուելուն տեսակէտով: Աւելորդ է ըսել թէ Եկեղեցւոյ ծէսերը, և դատարաններու առջեւ կատարուելիք երդումը, նոսեւ հայրապետական կոնդակները պիտի շարունակուին գրաբար լեզուով ըստ առաջնոյն:

*
* *

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԽՆՃԱԿԱ Կը լուծէ Էջմիածնի Սինօղը

Էջմիածնի Սինօղի օրագրութեանց մէջ՝ հրատարակուած Արարատի Յուն վարի թիւով՝ շատ կտրուկ որոշումներ կը տեսնենք քահանայական հարցերու շուրջ: Այսպէս, Սինօղը լուրջ քննութենէ անցընելով Սուլթան Նուսի գիւղացի և քահանայութեան ընծայացու Սուքիաս Տէր Ղազարեանը, որ Էջմիածնի ձեմարանի չորրորդ դասընթացքն անցուցած, չորս տարի ուսուցչութիւն ըրած, և պատրաստակամութիւն յայտնած է թրքախօս ժողովրդեան հոգեւոր պէտքերը հոգալու, Ն. Ս. Օծուծին Վեհափառ Կաթողիկոսին հաւանութեան կը ներկայացնէ քահանայ ձեռնադրել զայն, նկատելով որ նոյն գիւղը գտնուող միակ ձերուների քահանան՝ ձերութեան, կուրութեան և հիւանդութեան պատճառով չի հասնիր նոյն գիւղի 200 տուն բնակիչներուն և երկու եկեղեցիներուն: Այս որոշման մէջ, Սինօղը կը ցուցնէ գիտակից ոգի, քահանայի 3 ձեռնադրութիւնն արտօնելով միայն ո՛ւր որ պէտք կայ, և այդ պէտքը գոհացնելու կարող ընծայացու մը կը ներկայանայ:

Ճիշտ նոյն ոգւով, Սինօղը մերժած է քահանայացումը Մխիթար Տէր-Բարսեղեանի, որ կ'ուզէր քահանայ ձեռնադրուիլ Վաղարաւ և Կարմիր-քար գիւղերուն վրայ, որ ունին 106 տուն բնակիչ, բայց

ընծայացուն չունի պատշաճ ուսման վկայական, սովորած ըլլալով միայն Արցախի թեմական ուսումնարանի մէջ: Ծիշտ նոյն պատճառով, պահանջուած զարգացման չգոյութեան հետեւանօք, մերժուած է քահանայացումը Աղաբէկ Պաղտասարեանի, Չըրչըր գիւղին վրայ, հակառակ որ նոյն գիւղը ունի 110 տուն բնակիչներ որ գուրկ են քահանայէ: Սինօղը չէ թոյլատրած նաեւ Աստաբախանցի Աստուածատուր Մեղնիկեանի՝ Ղարասուքազար քաղաքի վրայ քահանայ ձեռնադրուիլը, որովհետեւ ըստ ծիական կանոնադրի, քաղաքներու մէջ քահանայ ձեռնադրուիլ փափաքողները պարտաւոր են թեմական ղարոցներու աւարտական վկայական ունենալ, իսկ ընծայացուն ունի միայն երրորդ դասարանի վկայական:

Միւս կողմէ Սինօղը, համաձայն Հայրապետական կոնգրէի, քահանայական կարգէ և կոչումէ զրկուած հոգևեց գաղթական Սաչատուր քհ. Տէր Յարութիւնեանը՝ իր զեղծումներուն, օրինազանցութեան, ըմբոստութեան և շարք մը շահատակութիւններուն համար, և որոշեց պատուիրել որ ևս այլեւս չկրէ ֆահանայական զգեստ, և հակառակ պարագային դիմելու ուսիկանութեան:

Վերջապէս Սինօղն իմանալով որ Երեւանի Նորք քաղաքամասի Ս. Սիմէոն եկեղեցւոյ ծխատէր Յակոբ քհ. Տէր-Սիմէոնեան Ս. Պետրոս-Պողոս եկեղեցւոյ ծուխն ինքնազուխ կը հովուէ, հրամայեց գրիլ Երեւանի փոխ թեմակալին՝ որ նոյն քահանան ուղարկէ Նորք քաղաքամասի Ս. Սիմէոն եկեղեցիին ժողովուրդը հովուելու, որու վրայ ալ ձեռնադրուած է:

Էջմիածնի Սինօղին քահանաներու մասին տուած այս որոշումները կը թելադրեն մեզ կարգ մը թելադրութիւններ, որոնց նկատառումը միծապէս օգտակար պիտի ըլլար նոյն ինքն քահանայական դասուն լաւ իմացուած շահերուն, և հետեւապէս ժողովուրդին ալ: Ամենակարեւոր կէտն է քահանայութեան կոչուողներու համար կատարուած խիստ քննութիւնը, որով անոնք պարտաւորուած պիտի ըլլան ուսման որոշ աստիճանի մը տիրացած ըլլալ,

այսինքն միշտ աւելի՝ բարձր զարգացում մը ունեցած ըլլալ իրենց ժողովուրդէն: Երկրորդ կէտն է քահանայի ձեռնադրութիւնն ա՛յն տեղը միայն ուր բացարձակ պէտք կայ, հետեւապէս ապահովութիւն կայ նիւթական գոհացուցիչ կացութեան մը, առանց որոյ ու է մէկը՝ հոգեւորական թէ աշխարհական՝ չի կրնար մնալ իր պարտականութեան բարձրութեան վրայ: Վերջապէս երրորդ կէտն է, քահանայից ձեռնադրութիւնէն ետքը որոշ օրէնքի մը կիրարկումը անոնց վրայ, իր բոլոր խստութեամբ, որով ոչ միայն զեղծանող, օրինազանց, ըմբոստ քահանան կարգազուրկ կը հռչակուի և կ'արգիլուի քահանայական սքեմ կրելէ, հակառակ պարագային ուստիկանութեան դիմուելու սպառնալեօք, այլև իր ծխատիրական սահմանէն դուրս պաշտօնավարել նկրտող քահանան անմիջապէս կը կոչուի ամփոփուիլ իր սահմանին մէջ, որով բնականաբար տեղի չի տրուիր անհարկի վէճերու, տխուր բանակութիւններու կարգ մը հոգեւորականներու միջեւ, ինչ որ շատ աննպատակ ապաւորութիւն պիտի գործէր աշխարհականներու վրայ, իրաւամբ:

Նոյն կտրուկ տնօրէնութիւնները, նոյն ծխական կանոնադրի անթերի և խստօրէն գործադրումը հարկեցուցիչ դարձած է այլևս թրքահայոց և նոյնիսկ Պոստոյ մէջ: Կրօն. Պատկ. Ժողովէն կը սպասուի ու շաղթութիւն դարձնել այս ամենակարեւոր հարցին վրայ:

ՊՈԼՍԱՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Պոլսահայ կեանքը, վերջին տասնեակնեօրեակին մէջ, շատ յուզումնալից եղաւ այնպիսի խնդրոյ մը շուրջը, որուն խաղաղ լուծումն անկարելի չէր: Կուսակցականներու կողմէ եկեղեցիներու մէջ բանաստեղծութիւն հարցը, պէտք եղածէն աւելի շունչ, մելան և... ուժ սպառեց: Թէ Հայ եկեղեցին էսպէս ժողովրդավարական հանգամանք ունի, այդ ոչ ոք կրնայ ուրանալ: Եւ նորագոյն ապացոյցն ալ այն է որ ազա-

տուութեան հաշակման առաջին օրերուն, եկեղեցիներու դռները լայնօրէն բացուեցան կուսակցական բանախօսներու առջեւ, և եկեղեցական ու աշխարհական հաւասար հետաքրքրութեամբ ու եռանդով ունկընդդէմ անոնց: Եթէ հիմա ժողովըրդային հակահոսանք մը կայ, ատոր պատճառը՝ նոյն բանախօսներն և անոնց համաժիտներն իրենց մէջ պէտք է փնտռեն. իրենց որ խօսքով ու գործով վերաւորեցին ժողովուրդին ամէնէն նուիրական զգացումները: Յաւալի՝ ծայրայեղութիւններ գործուեցան վերջին երկու շաբաթներուն մէջ: Ազգային երեսփոխան մը, Արթ. Տ. Հմայեակ քահանայ էքսէրճեան, որ ընտանեկան սուգի մը հարուածին առաջին վըշտառիթ ազդեցութեան տակ կը գտնուի դեռ, գիշեր ատեն չարաչար գանակոծուեցաւ անձամբներու կողմէ, որոնց ինչպիսի անձեր ըլլալն ստուգեցին, ճշտեցին յետոյ թերթերը: Մենք սիրով պիտի ուզէինք հաւատալ անոնց որ այդ գանակոծութեան դէպքն ուրանալ կը նկատին, եթէ քանի մը օր վերջը, Ղալաթիոյ եկեղեցիին բակը չպատահէր ազգային կեանքի մէջ աննախընթաց բռնութիւն մը, ճնշում մը ազգային երեսփոխաններուն վրայ, և եթէ գաւազանի հարուածներով չընդունուէր գրչի մեծ վաստակաւոր մը, Բիւզանդիոյ Տէր և Տնօրէն Բիւզանդ Էֆ. Քէչեանը, բեղուն մտքի, բազմակողմանի հմտութեան և առողջ դատողութեան տէր հրապարակագիրը, որուն միակ յանցանքն էր կարգ մը կուսակցականներու ճակտիկային համու միտ չգտնուիլը, և իր գաղափարը շատ համոզիչ լեզուով մը պաշտպանած ըլլալն իր թերթին մէջ: Եթէ ունէին լուրջ առարկութիւն մը, լայն միջոցներ կային նոյնքան համոզիչ լեզուով ապահովելու իրենց գաղափարին յաղթանակը: Եւ երբ, փոխանակ ատոր, սփայի հարուածներու կը դիմուի, ճնշում ի գործ կը դրուի ազգին ստուար մեծամասնութենէն ընտրուած շատ յարգելի երեսփոխաններու վրայ, ժողովըրդեան ամէնէն չեղօք դասակարգերուն մէջ ալ համոզում յառաջ կուգայ թէ ճշմարտութիւնն այդ սփայի պարոններուն կողմը չէ: Անգե՛ն մարդոց դիմափայտով պայծառութեամբ շաւ գաղափար մը անգամ կը դադրի ժողովրդային համակրութիւն վայելելի: Ատոր հետեւանքը կ'ըլլայ հրա-

ժարումը կարգ մը երեսփոխաններու որոնք «չեն կրնար երեսփոխանութիւն ընել ամբողջային ճնշումի տակ»:

Շատ կը ցաւինք կուսակցականներու ընդգրկած այս բռնն միջոցներուն համար, որ պարզապէս իրենց վարկաբեկումը յառաջ կը բերեն: Ազգին ստուար մեծամասնութեան հետ իրենց համերաշխ գործունէութիւնէն շատ օգուտներ պիտի կրնար քաղել այս տառապեալ ժողովուրդը:

* * * Վերի տողերը գրած էինք, երբ Արթ. Տ. Արիստակէս քհ. Հիսարեանէ՝ հրատարակելու խնդրանք՝ ստացանք հետեւեալ հրաժարագիրը, որ կ'աւելնայ Տեարց Բիւզանդ Քէչեանի, Մինաս Զեւրադի, Վահան Թէքեանի և Երուանդ Օտեանի բողոք-հրաժարագրերուն վրայ. —

Ազն. Տիար Ասենայեան Ազգ. Երեսփ. Ժողովոյ

Պարտ անձին կը համարիմ յայտարարել թէ այսուհետեւ անկարելի պիտի ըլլայ ինձ՝ արտի հանդարտութեամբ շարունակել անդամակցութիւնը ա'յնպիսի Ժողովի մը, որոյ անդամոց մեծագոյն մասը յապահովի չեն զգար ինքզինքնին իրենց անձնական կարծիքը ազատօրէն յայտնելու, վախճալով որ մի՛ գուցէ գանակոծութեան կամ թուք ու մուրի ենթարկուին՝ մասնաւորապէս կազմուած խմբակներու կողմանէ, որոնք մէկ քանի պարագլուխներու ձեռքին մէջ կոյր գործիք մը հղած են անգիտակցաբար:

Այս տխուր ճշմարտութիւնները ապացուցանելու հարկ չեմ տեսներ. վաճառիկ եղբ. Վարչութեան խառն Ժողովոյ բոլոր ներկայ անդամները՝ որոնք նիստ ունէին Ղալաթիոյ Խորհրդարանը, ինծի հետ ահա նստեալ եղան դժբախտաբար այն յոռի և անպատուաբեր արարքներուն՝ որք տեղի ունեցան վերջին ընդհանուր Ժողովոյ գումարման օրը, Սուրբ Եկեղեցւոյն բակը ըմբռնամարտութեան կրկէսի մը վերածելով:

Հետեւաբար ներկայիս կուգամ խնդրել Պատկառելի Ժողովէդ, որ ա'յս օրու ինչպէս հրաժարեալ նկատէ զիս Երեսփոխանութենէ, ինչպէս նաև Օրմանեան Յանձնաժողովի անդամակցութենէ:

Կարողութիւն մաղթելով յարգելի պաշտօնակիցներուս, և միանգամ ընդ միշտ մատուցանելով իմ հրաժեշտի ողջոյններս:

Մնամ Աղօթաբար

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔՀ. ՀԻՍԱՐԷԱՆԷ

31 Մարտ 1910, Սամաթիւն

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ

Կ Ա Ս

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ

Բ Ա Ր Ձ ՈՒ Մ Ը

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն Ը. թիւին)

Տ Ն Ս Ի Լ ԺԱ.

ԱՐՏԱՇԷՍ ԵՒ ԳԻԻՏ

ԳԻԻՏ. — Տեսա՞ք, Տէր արքայ, ո՛րքան վիրաւորեց զիս Վարդան իր դարձդարձիկ խօսքերով: Սակայն ես խոհեմութիւն սեպեցի լռել:

ԱՐՏԱՇԷՍ. — Բայց, նախարար, Վարդան ի՞նչ պատճառ ունէր Ձեր հանդէպ այդպիսի ընթացք մ'ունենալու:

ԳԻԻՏ. — Ձեռ գիտե՞ր ո՛ր անխիղճը զինած է զինքը իմ դէմ: Նա կը կասկածի իմ անկեղծութեանս վրայ, ո՛վ գիտէ, կարծելով թերեւս թէ լրտեսի դեր կը կատարեմ Վասակի մօտ: Սխալ ենթադրութիւն. Գիւտ ա՛յդքան ստորին է՝ որ իր նախարարի դիրքը իջեցնէ վատ լրտեսի մը դիրքին: Ճշմարիտ է թէ ես չեմ ուզեր որ Ձեր և Սիւնեաց նախարարին միջեւ ցըրտութիւն տիրէ և տեւէ. ասի չատ մեասակար է Ձեր կացութեան: Վասակէն կարելի է սպասել օգտակար ծառայութիւններ. ասի իմ անխախտ համոզումս է՝ որուն համաձայն են իմ շահերս ու շարժումներս: Ձեռ կարծեր, Տէր արքայ, որ ասի իրաւունք տայ իմ թշնամիներուն՝ զրպարտութիւններ յերկրել իմ անձիս շուրջը: Վատահ եմ միւս կողմէ որ Դուք գիտէք գնահատել անկեղծ ու լուրջ վերաբերումները: Թոյլ տուէ՛ք ուրեմն, Տէր Արքայ, որ ե՛ս ալ մեկնիմ:

ԱՐՏԱՇԷՍ. — (Բից մը անհարբեր) Աղա՛տ էք: (Գիւտ յարգալից խոնարհելով կը մեկնի) Վասակ... Էհ, տեսնենք. ես չեմ խառուիր, բայց թերեւս յաղթուիմ: Վա՛տ բախտ, ե՛ս ալ թող աւարդ ըլլամ...

ՍՄԲԱՏ. — (Ներս կը մտնէ). — Այդ ի՞նչ է, արքայ:

ԱՐՏԱՇԷՍ. — Ահ, դուք դեռ հո՞ս էք:

ՍՄԲԱՏ. — Այո՛, և իմ միալս նպատակաւոր էր: Ես պարտականութիւն ունիմ զգուշացնելու զՁեզ Գիւտի շողոքորթ, երկերես ու խաբեբայ ձեւերէն ու խօսքերէն:

ԱՐՏԱՇԷՍ. — Ի՞նչ կ'ըսէք, ասպետ, Գիւտի՞ համար կը խօսիք:

ՍՄԲԱՏ. — Այո՛, Վահուհեաց նախարարի:

ԱՐՏԱՇԷՍ. — Ձարմանալի՛, հը՛...

ՍՄԲԱՏ. — Ձկուհեցի՞ք քիչ մ'առաջ երբ Վարդան սուրհանդակի բերած թուղթը կարդալէն վերջ կարգ մը ակնարկուած թիւններ ըրաւ և Գիւտ ի՞նչպէս յանցապարտի նման Վարդանի երեսն անգամ չէր կրնար նայիլ: Իբր թէ խոհեմութիւն սեպեր է լռելը. և լա՛ւ էր որ լռեց, ապա թէ ոչ սպարապետը քիչ մը անհամբեր է, կրնար յայտնապէս զինքը խայտառակել: Հայրապետին գողունի ակնարկին վրայ միայն նա ինքզինքը զսպեց:

ԱՐՏԱՇԷՍ. — Ի՞նչ թուղթ էր Պարգեւի բերածը:

ՍՄԲԱՏ. — Հաւանաբար նախարարական խորհուրդի մասին տեղեկութիւններ հաղորդող գիր մը:

ԱՐՏԱՇԷՍ. — Օ՛, հետաքրքրական թուղթ... Բայց իրա՛ւ Գիւտ ալ Վասակի համախոհ է:

ՍՄԲԱՏ. — Ատի ամէն տարակոյսէ վեր է. և նոյն իսկ չարամիտ թելադրող մը, ցած լրտես մը և իրերն ու իրողութիւնները անխղճօրէն խեղաթիւրող մ'է նա:

ԱՐՏԱՇԷՍ. — Եւ ինձի կ'ըսեն որ նա խարարները սիրաշահիմ... Ահա՛ անկեղծ կարծուածներէն մէկն ալ, որ իբրեւ լըրտես կը սլքտայ եղեր պալատիս շուրջը, և իր չարանիւթ քաղաքականութիւնով կը տքնի լայնել այն փոսը՝ զոր Վասակ պատ-

բաստած է Արշակունի տան անկումին համար: Այս ալ արդեօք գայթակղած է իմ բարոյականիս վրայ... Ծէ, որքան բարեհախանձ աւագանիներով բոլորուած է Հայոց թագաւորը: Հաւատացէ՛ք, ասպետ, կ'անիծեմ այն օրը, ուր դուք իմ թագաւորութիւնս հաստատող հրովարտակը բերիք Տիգրանէն: Նախարարները պիտի կըրնայի՞ն տանիլ որ երիտասարդ Արշակունի մը իշխէր իրենց վրայ:

Արտաշէս զոհ մ'է, ասպետ, թող անոր արիւննովն ու ճենճերումովը լուացուին ու հրճուին բոլոր անոր թշնամիները...: Ամէն լուտանք, ամէն պարսաւանք, ամէն նախադէպ իմ գլխուս. չէ՛, չէ՛, Արտաշէսը յիմար մը չէ, նա գիտէ թէ ի՞նչ մեքենայութիւններ կը սարքուին իր շուրջը...: Ախ, եթէ զօրաւոր դաշնակից մ'ունենայի՛ գիտեմ թէ ես ի՞նչ կ'ընէի: Բայց, ի՞նչ օգուտ, ժամանակն ալ թշնամիին դաշնակցած է: Վանդակի մէջ առիւծ մ'իսկ ի՞նչ պիտի կրնար ընել:

ՍՄԲԱՍ. — Դաշնակիցներնիդ, արքայ Արտաշէս, ներքին ոյժեր ըլլալու են:

ԱՐՏԱՇԷՍ. — Եւ ո՛ր փնտռել այդ երեւակայական ոյժերը:

ՍՄԲԱՍ. — Բոլորովին չեն պոկսիր: Ասկից գատ մեղի կը մնայ միջոց մ'ալ. եթէ նախարարները մնասակար քայլ մ'առնել փորձեն, ջանալ հերքել ամէն սմբաստանութիւն՝ որ Տիգրանի գահոյքին աւջիւ քաղաքական յանցանքով մը զԶեզ պիտի ուզէ դատապարտել:

ԱՐՏԱՇԷՍ. — Կը կարծէ՞ք որ Տիգրան կարեւորութիւն ընծայէ մեր արդարացումներուն:

ՍՄԲԱՍ. — Թերեւս...

ԱՐՏԱՇԷՍ. — Հակառակ պարագային, ինչ որ շատ հաւանական է:

ՍՄԲԱՍ. — Է՛, ի՞նչ կրնանք ընել: Ասով մէկտեղ յուսահատելու չէ: Վասակը սիրաշահելու փորձեր պիտի ըլլան, եթէ այդ յաջողի, ինչ որ թէեւ քիչ մը տարակուսելի է, իրերը կրնան կերպարանափոխուիլ. եթէ մանաւանդ, ներեցէ՛ք որ ե՛ս ալ կրկնեմ, դուք ալ քիչ մը փոխէ՛ք Ձեր քաղաքականութիւնն ու կենցաղավարութիւնը,

մէկը խոհականութեան և միւսը ողջախոհութեան վրայ հիմնելով: Քաղաքականութիւնը իշխանութեան մը դեկն է. դեկավարը խնաստուն ըլլալու է՝ դէպի ուղիղ նպատակը վարելու համար նաւը. իսկ երբ քաղաքականութիւնը անհատի մը քմահաճոյքին խաղը կ'ըլլայ՝ կը ծնի բռնապետութիւնը, որուն բնական հետեւանքն է ապրտամբութիւնը, երբեմն փրկարար և երբեմն կործանարար: Դուք գիտէ՛ք թէ Սիւնեաց նախարարութիւնը սկիզբէն ի վեր տեսակ մը բնագդական հակամիտութիւն ունի Արարատեան գերիշխանութիւնէն անկախ և ուրիշ նախարարութիւններէ գեր ի վեր ինքնօրէն իշխանութիւն մը վարելու: Սիւնեաց բոլոր իշխանները, քացի Բաբիկէն, որ թէ՛ իր գործերով և թէ՛ իր բարեգարդութիւնովը գովելի անուն մը ձգեց, ըմբոստ նկարագիր մ'ունեցած են, և հակառակ ազգակցական այն կապին՝ որ հաստատուած է Արշակունի տան և յիշեալ նախարարութեան միջեւ, այն ալ գիտէ՛ք սակայն թէ ի՞նչ տխուր պարագաներու տակ, կարելի չէ եղած անկեղծ ու տեւական յարաբերութիւն մը մշակել անոնց միջեւ, միայն բարեյիշատակ հայրերնիդ կըրցաւ սիրով ու խաղաղութիւնով ապրիլ ու վարուիլ Վասակի հօր՝ Բաբիկի հետ:

ԱՐՏԱՇԷՍ. — Իսկ Վասակի՞, որուն հետ դէմ առ դէմ բերաւ զիս անիծեալ բախտը...

ՍՄԲԱՍ. — Վասակ ալ, ճշմարիտը խօսելով, նախապէս այնքան վատ մէկը չէր. հանճարեղ, խոհական ու յառաջադէմ երիտասարդ մը՝ նա երբեմն խիստ սիրելի ընծայած էր իր անձը նոյն իսկ Մեսրոպ վարդապետի, (Արտաշէս թուղթին վրայ ակնարկ մը նետելով կը հառաչէ) երբ սա Աւետարանի քարոզութեան համար Սիւնեաց աշխարհը կը մտնէր: Պէտք է ըսել թէ վարդապետին հրեշտակակրօն վարքի կախարդանքէն գատ Ձեր հօրը պատկառազդու հեղինակութիւնն ալ կար: Վասակ քացի իր ցեղական կամ ժողովրդական ձգտումէն՝ անկախ գիրքի մը տիրանալու, ունեցաւ նաև ուրիշ պատճառներ, որոնց պատասխանատուութիւնը, արքայ

Արտաշէս, մասամբ կը ծանրանայ Ձեր վրայ: Սխալ չէին Գիւտի յայտարարութիւնները Սիւնեաց նախարարի մասին. բայց զժախտաբար ինքը ուղղամտութիւնով և այդ ուղղութիւնով չգործեր բնաւ: Վասակ հանճարեղ է, կը կրկնեմ, բայց նոյն ատեն փառամոլ է. խոհականութիւնը կը պահանջէր անոր առջին յատկութիւնը գործածել գիտնալ Ազգին օգտին, առանց վիրաւորելու և ո՛չ ալ քաջալերելու անոր փառասիրական զգացումները: Ինչ որ է սակայն. ա՛լ եղածը եղած է, պէտք է պատրաստուիլ պաշտպանողականի դերին և վերջին ճիգով մը թօթվելով անտարբերութիւնը՝ սթափիլ ու աշխատիլ:

ԱՐՏԱՇԷՍ.—Այո՛, ա՛լ եղածը եղած է. նախարարները լա՛ւ պիտի կատարեն իրենց դերը. Արշակ Գ.ի ճակատագրի՛րը վերապահուած է ինձ ալ:...

(Վարագոյրը կ'իջնէ)

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾԻՆ

ԳԱՐԵԳԻՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

(Շարունակելի)

ԳԱՒԱՌԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

Խրախուսական երեւոյթ մ'է հեռաւոր թէ մօտաւոր գաւառներու մէջ երեւումը պարբերական հրատարակութիւններու, որ գաւառացիին մօտաւոր զարթնումը կը պատրաստեն կամ կը մատնանշեն:

Նորագոյն հրատարակութեանց կարգէն է. Պարտիզակի ՓԱՐՈՍը, ամսաթերթ, խմբագրապետութեամբ գրական հրապարակին վրայ ծանօթ՝ Տիար Յակոբ Ալոճեանի: Բրօֆ. Արրահամ Տէր Յակոբեանի, Գր. Մխալեանի, Տոքթ. Ռ. Ջէմալբաշի նման խոհուն միտքեր իրենց լուրջ աշխատակցութիւնը ի սպաս կը դնեն Պարտիզակի և չրջակայից երիտասարդութեան: Յաջողութիւն կը մաղթենք:

Կիրասոնի մէջ ևս մարտ 1էն սկսած է վիճաբար հրատարակուիլ կիսամսեայ մը, ՓեթԱկ, որուն մէջ գովելի ճիգ մը կ'երևուի համեղ և հիւթեղ մեղր արտադրելու: Պատասխանատու տնօրէն՝ Վահան Նարչեան:

«ՏԱՃԱՐ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տիար Յ. Նշկեան, Ծրեզնո.— Ծնորհակալութեամբ ստացանք ութ բաժանորդներու բաժնեգները: Թերթերը կը ղրկուին իրենց հասցէներուն: Ընկալագրերը մասնաւոր նամակով:

Տ. Խ. Վ. Գ., Եօզիաս.— Ութերորդ թիւէն սկսեալ թերթերը կ'ուղղուին ուղղակի բաժանորդներու հասցէին: Դրամն ստացած ենք. ընկալագրերը ղրկուեցան:

Ա. Բ. Տ., Զօրում.— Ձեր բաժանորդագրին ստացուած է և թերթերը կը ղրկուին միշտ. նամակատուէն փնտռեցէք:

ԳԱՒԱՌԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Գաւառի և արտասահմանի բաժանորդներէն անոնք որ չեն վճարած ցարդ իրենց բաժնեգները, պէտք է փութացնեն կամ ուղղակի մեզ (Զարնայր ֆո. Կեզիւրեան, Պեշիքաշ, Հայոց եկեղեցի), և կամ յանձնեն իրենց քաղաքի գործակալներուն: Յառաջիկայ Ս. Զատիկի թիւը 10րդը պիտի ըլլայ և վեցամեան լրանալու մօտ է. և հետեւապէս անհրաժեշտ է դրամի առաքումը, եթէ կ'ուզեն կանոնաւորապէս ստանալ կրօնաթերթս, այդ 10րդ թիւէն ետք ալ:

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Տաճարի տնօրէն խմբագիրը խորին չընորհակալութիւն կը յայտնէ այն համակիր շնորհաւորութեանց համար, որ բանիւ և գրով կը յայտնուին զանազան կողմերէ: Ծնորհակալութեան պարտք մ'ունինք նաև Բիզանդիոն, Ժամսնակ, Հայրենիք, Առաւօտ և այլ օրաթերթերու, որք Տաճարի խմբագրականնոր կազմակերպութեամբ հրատարակումը ծանուցին համակիր տողերով:

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՀՄԱՅՆԱԿ ԳՀՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԳՀՆՅ. ԿԷԶԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Ձագմագճըլար, Յակոբեան խան

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

254

ՏԱՃԱՐԻ

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դուրուս
Գաւառաց » »	40 »
Արտասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	50 փարայ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Մ. Վրդ. Գալէմքերեան
2. Տ. Տիրայր Մ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
4. Տ. Գարեգին Վրդ. Խաչատուրեան
5. Տ. Պարգեւ Վրդ. Դանիէլեան
6. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
7. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարեան
8. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալըզճեան
5. Տ. Պօղոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

Տաճարի թէ՛ վարչական և թէ խմբագրական գործերուն համար պէտքէ դիմել
 Զարմայր Բահանայ Կէզիւրեանի, Պէշիքթաշ, Հայոց Եկեղեցի, և կամ
 Պոլիս, Զագնագճըշար, Յակոբեան խան, Օ. Արզուման Տպարան
 ارمنيجه «داجار» خزانة می اداره خانه می درسمادنده چاقاچیلر آغوبیان خان آرزومان مطبعه می

Rédaction de la Revue «DADJAR»

Imprimerie O. Arzouman, Stamboul, Agopian Han, Constantinople (Turquie).